USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ԻԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

CRRC Armenia

2019 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

Այս զեկույցում ներկայացված է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում կոռուպցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1500 տնային տնտեսություններում 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված հետազոտության հիմնական արդյունքները: Համեմատության համար որոշ դեպքերում զեկույցում օգտագործվել են նաև 2008-2010թթ. անցկացված համանման հարցումների արդյունքները:

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հասարակական կազմակերպությունները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԹԻՀԿ-ն շնորհակալություն է հայտնում «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետազոտական թիմին՝ Հեղինե Մանասյանին (համակարգող և խմբագիր), Նարինե Մելիքյանին (վերլուծաբան), Սոնա Բալասանյանին (մեթոդաբան), Էլլա Կարագուլյանին (ընտրանքի փորձագետ), Սոնյա Մսրյանին (տվյալների մշակման մասնագետ), Մարիամ Առաքելյանին (հարցաթերթը թվայնացում) և Մարիամ Եվդոկիմովային (տվյալադարանի մշակում) հետազոտության անցկացման և զեկույցի մշակման համար:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝+374 10 569589, 569689
Էլ. հասցե՝ info@transparency.am
Կայք էջ՝ www.transparency.am

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ
Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, 6-րդ հարկ, 602 սենյակ
Հեռ.՝ +374 10 574898, 574868
Էլ. հասցե՝ crrc@crrc.am
Կայք էջ՝ www.crrc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9
ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ԸՆԴԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 12
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԱՆՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԴՐԱՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 19
1.1 Հայաստանի ընդհանուր իրավիճակի ընկալումը 19
1.2 Կոռուպցիայի ընկալումը 23
ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՀՏՈՒՍԱՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 27
2.1. Կոռուպցիոն վարքագծի ընդհանուր ընկալումները 27
2.2. Կոռուպցիոն վարքագծի ընկալումները՝ ըստ տարիքի և հատատություն ների 32
2.3 Կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրները 41
ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿԱԿԵՐՈՒՄԱՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ 47
3.1. Անհատական վարքագիծը կոռուպցիոն իրավիճակներում 47
3.2. Անհատական փորձառությունը կոռուպցիոն իրավիճակներում 50
ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՀՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 52
4.1 Հակակոռուպցիոն անհատական վարքագծի ընկալումները 52
4.2 Հակակոռուպցիոն հնարավոր անհատական գործողությունները 58
ԳԼՈՒԽ 5. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑԱԿԱՆ ՎԱՐՔԱՀՈՒԹՅՈՒՆԸ 63
5.1. Պետական մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածությունը 63
5.2. Իրազեկվածությունը հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին 66
ԳԼՈՒԽ 6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 71
6.1 Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ իրազեկվածությունը 71
6.2 Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների արդյունավետության գնահատումն ու հնարավոր սկսնկալ իքները 76
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 81

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանի տնային տնտեսությունների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային հետազոտությունը (Հետազոտություն) իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի (ՀՌԿԿ-Հայաստան) կողմից Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի պատվերով:

Հետազոտությունը նպատակ է հետապնդել պարզելու՝

- հայաստանցիների ընկալումները Հայաստանի ընդհանուր վիճակի, կոռուպցիայի և դրա դրսևորումների վերաբերյալ,
- կոռուպցիոն երևույթներին առնչվելու նրանց անձնական փորձը,
- կոռուպցիայի նկատմամբ հանրային և անհատական վարքագծի դրսևորումները,
- երկրում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղեկացվածությունը և դրանց գնահատումը,
- կոռուպցիային առնչվող տեղեկատվության հիմնական աղբյուրները,
- հայաստանցիների հակակոռուպցիոն ընկալումների և վարքագծի փոփոխությունը 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո,
- համադրելի տվյալների պարագայում՝ վերջին ինը տարիների կտրվածքով կոռուպցիայի և հարակից խնդիրների ընկալումներում տեղ գտած փոփոխությունները:

Հետազոտությամբ խնդիր է դրվել ստեղծել գործնական տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածին՝ պետական կառավարման ոլորտը բարելավելու և հակակոռուպցիոն քաղաքականություններ ու ծրագրեր մշակելու համար:

Հետազոտության հարցաթերթը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի և «Թրանսփերենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, հիմք ընդունելով 2008-2010թթ. ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում ՀՌԿԿ-Հայաստանի կողմից իրականացված երեք հետազոտությունների հարցաթերթերը:

Հետազոտության տվյալները հավաքագրվել են 2019թ. հոկտեմբերի 17-ից դեկտեմբերի 2-ը ընկած ժամանակահատվածում՝ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Հարցմանը մասնակցել են 18 և բարձր տարիքի 1500 ՀՀ քաղաքացիներ (95% վստահության սահմաններում 2.5% սխալի թույլատրելի շեղումով):

Հետազոտության վերլուծական զեկույցին կցված պարզ հաճախությունների և խաչաձև աղյուսակները ներկայացնում են հավելյալ մանրամասներ Հայաստանում կոռուպցիայի հանրային ընկալումների վերաբերյալ:

Հետազոտության հիմնական արդյունքները

Հայաստանի ընդհանուր իրավիճակի և երկրի հիմնախնդիրների շարքում կոռուպցիայի ընկալումը

- Հարցվածների ավելի քան մեկ քառորդը կարծում է, որ Հայաստանի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրը գործազրկությունն է: Քաղաքացիներին լրջորեն մտահոգում են նաև աղքատությունը, սոցիալապես ոչ նշանակալի աշխատավարձերը և առհասարակ սոցիալական հիմնախնդիրները, արտագաղթը: Կոռուպցիան առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում (6-րդ տեղում) է դասել հարցվածների 5.7%-ը:
- Հարցվածների 90%-ը կոռուպցիան համարել է լուրջ հիմնախնդիր (36.5%-ը՝ չափազանց, 28.3%-ը՝ բավականին և 25.3%-ը՝ որոշ չափով), իսկ նրանց գերակշիռ մեծամասնությունը (81.4%) համամիտ է, որ կոռուպցիան չարիք է և այն պետք է վերացնել:

Կոռուպցիայի տարածվածության և միտումների ընկալումը

- Չնայած կոռուպցիայի վերաբերյալ ընդհանուր իրազեկվածությանը, կոռուպցիայի որոշ դրսևորումներ հարցվածներին թվում են հանդուրժելի (օրինակ՝ մարտի 8-ին ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը, գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող հանգանակությունները, բժշկին որպես շնորհակալություն նվեր տալը և այլն):
- Կոռուպցիայի հիմնական դրդապատճառների թվում հարցվածները մատնանշել են գործընթաց արագացնելը (26.7%), խնդրի լուծման օրինական տարբերակի բացակայությունը (16.1%), օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից խուսափելը (14.4%):
- Հարցվածների գրեթե կեսն այն կարծիքին է, որ Հայաստանում ամենակոռումպացված կառույցը դատարաններն են (49%): Դրանց հաջորդում են ՋԼՄ-ները (44%) և դատախազությունը (43%): Հարցվածների 75%-ը «բնավ չկոռումպացված» է համարել ՀՀ վարչապետին, իսկ 57%-ը՝ ՀՀ Նախագահին՝ իր աշխատակազմով:
- Հարցվածների գրեթե երկու երրորդն ամենակոռումպացված ոլորտ է համարել առողջապահությունը: Կոռումպացվածության հայտանիշով ոլորտները վարկանշելիս առողջապահությունը կրկին զբաղեցրել է առաջին (39.7%) տեղը, ինչպես նաև երկրորդը (17.6%), իսկ երրորդ հորիզոնականում հայտնվել է ճանապարհային ոստիկանությունը (12.3%): Բնավ չկոռումպացվածության համարում ունեն կոմունալ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա) և համայնքային ծառայությունները (աղբահանություն, հողհատկացման և շինարարության թույլտվություններ, քաղաքային տրանսպորտ և այլն)՝ համապատասխանաբար հարցվածների 63%-ի և 46%-ի կարծիքով:
- Հարցվածների 7.5%-ը համարել է, որ ներկայիս իշխանությունների օրոք կոռուպցիա չկա: Հարցվածների 46.5%-ը նշել է, որ կոռուպցիան քիչ է տարածված, իսկ ըստ 36%-ի՝ կոռուպցիան որոշ ոլորտներում շատ տարածված է: Ի տարբերություն դրա՝ հարցվածների գերակշիռ մեծամասնության (83.7%) կարծիքով մինչև 2018թ. ապրիլ-մայիս ամիսները կոռուպցիան կրել է համատարած բնույթ: Հարցվածների

ընկալումներով կոռուպցիայի առավել տարածված ձևերը ներկայումս նվազել են, բացառությամբ հովանավորչության, որի տարածվածության բաժինը այժմ մոտ 22 տոկոսային կետով ավելի մեծ է, քան առաջ:

- Հարցվածների 43%-ը նշել է, որ կոռուպցիան առավել տարածված է միջին օղակի պաշտոնատար անձանց շրջանում, իսկ 26%-ի կարծիքով այն առավել հաճախ հանդիպում է ցածր օղակներում: Հարցվածների մոտ 16%-ը չի բացառել կոռուպցիայի տարածված լինելը նաև վերին օղակի պաշտոնատար անձանց շրջանում: Ի դեպ. 2010թ. հետազոտության արդյունքներով վերին օղակներում կոռուպցիան տարածված էր համարել հարցվածների 49%-ը, միջին օղակներում՝ 26%-ը և ցածր օղակներում՝ 6%-ը:
- Հանրային կառավարման համակարգում որպես հիմնախնդիր հարցվածներն առանձնացրել են կադրային անհաջող նշանակումները (26.4%), նախկին իշխանությունների ճնշումները և հին կադրերի սաբոտաժը (14.4%) ու հանրային կառավարման փորձի բացակայությունը (14%): Հանրային կառավարմանն առնչվող խնդիրներում իրենց տեղն են գտել օրենքների որակին և իրավակիրարկման պրակտիկային վերաբերողները:
- 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո փոխվել են ինչպես կաշառքի չափի, այնպես էլ կաշառքի դեպքերի հաճախականության վերաբերյալ ընկալումները. հարցվածների 82.4%-ի կարծիքով կաշառքի չափն էականորեն կամ որոշ չափով նվազել է: Կաշառքի հաճախականության նվազման կարծիքին է եղել հարցվածների մոտ 91%-ը:
- Կոռուպցիայի նվազեցման հնարավորության մասին նշել է հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (80.6%), իսկ ամբողջովին վերացնելու հնարավորության մասին՝ նրանց 12%-ը:
- Որպես կոռուպցիայի տարածմանը նպաստող գործոններ հարցվածների 16.8%-ը նշել է հանրության կողմից օրենքներին չհետևելը, դրան հաջորդել է օրենքների անկատարությունը (14.2%): Որպես տնտեսական գործոն հարցվածներն առանձնացրել են տնտեսական ծանր վիճակը, աղքատությունը (12.3%):
- Հարցվածները որպես կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրներ ավելի հաճախ նշել են ԶԼՄ-ները (36.9%) և ասեկոսեները (28.8%):
- Հարցվածների 30%-ից ավելին տեղեկատվության հավաստիության առումով վստահել է «Շանթ» հեռուստաընկերությանը: Դրան հաջորդել են «Արմենիա» (18.3%) և Հ1 Հանրային հեռուստաընկերությունները (13.8%):

Կոռուպցիոն երևույթներին առնչվելու անձնական փորձը

- Զանազան ոլորտներում իրական կոռուպցիոն դեպքերի քչերն են առնչվել. այսպես, թեև հարցվածների 72.7%-ը հայտնել են, որ իրենք կամ իրենց տնային տնտեսության անդամները վերջին մեկ տարում գործ են ունեցել առողջապահական հաստատությունների հետ, դիմածների միայն 7.6%-ն է հավելյալ վճար տվել (ամենաստվար հատվածը՝ 37%-ը, մատնանշել է 10-30 հազար դրամի միջակայքը):

- 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո պետական պաշտոնյաների հետ հարաբերվելիս կոռուպցիոն երևույթների չեն բախվել հարցվածների 87-98%-ը: Համեմատական առումով որպես կոռուպցիոն երևույթ առավել հաճախ նշվել է հովանավորչությունը:

Հակակոռուպցիոն անհատական վարքագիծն ու գործողությունները

- Հարցվածների 73%-ը պատասխանել է, որ ոչ կաշառք կվերցի և ոչ էլ կտա:
- Կոռուպցիայի նվազեցման խնդրում հարցվածներն իրենց ներդրումը տեսնում են կոռուպցիոն դրսևորումներից զերծ մնալու, հատկապես՝ հանրային ծառայությունների համար կաշառք տալուց խուսափելու (37.6%), ինչպես նաև պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց հրաժարվելու (12.1%) մեջ:
- Կոռուպցիոն գործողության մասին չհայտնելու հիմնական պատճառը հասարակության քննադատության արժանանալն է, քանի որ կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելը կամ ազդարարելը հայ հասարակության կողմից՝ ըստ հարցվածների 74.6%-ի, դիտարկվում է որպես պախարակելի երևույթ:
- Կոռուպցիոն դեպքի կամ վարքագծի մասին տեղեկացնելու համար հարցվածներն ավելի հակված են դիմելու ոստիկանությանը (19.3%), ՀՀ վարչապետին (10.9%) և մարդու իրավունքների պաշտպանին (մոտ 5%): Անանուն ազդարարման www.azdararir.am հարթակին դիմելու ցանկություն է հայտնել հարցվածների ընդամենը 0.2%-ը:
- Պետական պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին վերջին տարում հայտնել է հարցվածների միայն 1.5%-ը: Այդ դիմումներն ուղղված են եղել առավելապես ՀՀ վարչապետին (26.2%), ոստիկանությանը (17.3%): Կոռուպցիոն դեպքի մասին հայտնածների 62%-ը իրեն պաշտպանված է զգացել: Ձեռնարկված գործողություններից հարցվածներն ավելի շուտ եղել են չբավարարված, քան բավարարված: Չբավարարված լինելու հիմնական պատճառներից է իրավասու մարմինների կողմից խնդրի նկատմամբ ձևական մոտեցում դրսևորելը (44.2%):

Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործողությունների ընկալումը

- Պետական մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իր իրազեկվածության մասին է հայտնել հարցվածների 39.3%-ը: Հարցվածների գրեթե երեք քառորդի ընկալմամբ հակակոռուպցիոն գործունեության տեսանկյունից առավել արդյունավետ պետական մարմին է ճանաչվել Ազգային անվտանգության ծառայությունը:
- Հակակոռուպցիոն առաքելություն ունեցող առանցքային կառույցների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը ցածր է: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մասին տեղյակ է եղել հարցվածների ընդամենը 2.2%-ը, իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի/կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին՝ 1.1%-ը:

- Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (94.3%) տեղյակ չի եղել կոռուպցիայի դեմ պայքարի առաքելություն ունեցող և Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների մասին:
- Կոռուպցիայի կոնկրետ փաստի վերաբերյալ օգնություն հայցելու պատրաստակամություն է հայտնել հարցվածների 56%-ը: Վերջիններիս ավելի քան 3/4-ը պատասխանել է, որ առաջին հերթին կդիմի պետական մարմիններին:

Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների ընկալումը

- Հարցվածների 35.8%-ը կոռուպցիայի դեմ պայքարի պատասխանատու է ճանաչել կառավարությանը/իշխող քաղաքական ուժին, իսկ գրեթե 30%-ը՝ կառավարությանը/իշխող քաղաքական ուժին, քաղաքացիներին, հակակոռուպցիոն կառույցներին, հասարակական, ինչպես նաև միջազգային կառույցներին միասին վերցրած:
- Կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի/գործողությունների վերաբերյալ գրանցվել է հանրային իրազեկվածության բավական ցածր մակարդակ: Հարցվածներն ավելի հաճախ (56%-ը) նշել են տարբեր պետական մարմինների թեժ գծերի վերաբերյալ իրենց տեղեկացվածության մասին:
- ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մասին լսել են հարցվածների ընդամենը 16%-ը:
- Հարցվածների կողմից հիմնականում հավանության են արժանացել կառավարության հակակոռուպցիոն այնպիսի մտադրությունները, ինչպիսիք են՝ գույքի, եկամուտների համատարած հայտարարագրումը (64%), դատական համակարգի պաշտոնյաների բարեվարքության ստուգումը (58%), ապօրինի ձեռքբերված գույքի և ունեցվածքի վերադարձը՝ առանց քրեական հետապնդման (56%) և անցումային արդարադատության միջոցառումները (55%):
- Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (81.6%) կառավարության հակակոռուպցիոն գործողությունները գնահատել է արդյունավետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության հարցաթերթ

Հետազոտության հարցաթերթը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի և ԹԻՀԿ կողմից՝ հիմք ընդունելով նախկին հետազոտությունների հարցաշարերը,[1] ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող ներկայիս զարգացումները:

Նախքան տվյալների հավաքագրումը, հարցաթերթը փորձարկել են 4 հարցազրուցավարներ՝ իրականացնելով 24 պիլոտային հարցում: Փորձարկման արդյունքում հարցաթերթը լրամշակվել է: Այն ներառում է շուրջ 80 հարց և կազմված է հետևյալ յոթ բաժիններից՝

- Հայաստանի ընդհանուր իրավիճակը և կոռուպցիան երկրի հիմնախնդիրների շարքում,
- Կոռուպցիայի տարածվածությունը և միտումները Հայաստանում,
- Անձնական փորձ և վարքագիծ,
- Հակակոռուպցիոն անհատական դիրքորոշում, հնարավոր գործողություններ,
- Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործողությունները,
- Ժողովրդագրություն,
- Զրուցավարի գնահատման ձև:

Ընտրանքի մեթոդաբանություն

Համամասնական ներկայացուցչական ընտրանքի մեջ ներգրավված են եղել 18 և բարձր տարիքի 1500 ՀՀ քաղաքացիներ (95% վստահության սահմաններում 2.5% սխալի թույլատրելի շեղումով): Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել են տնային տնտեսությունների թվի մարզային բաշխվածության վերաբերյալ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները (աղյուսակ 1): Որպես դաշտային աշխատանքների իրականացման ելակետ օգտագործվել են ընտրատեղամասերի հասցեները: Ստորև ներկայացած են ընտրանքի ձևավորման փուլերը:

Առաջին փուլ. համամասնական ստրատիֆիկացիա՝ ըստ ՀՀ մարզերի և բնակավայրի տիպի (մայրաքաղաք/այլ քաղաքային/գյուղական):

Երկրորդ փուլ. առաջնային ընտրանքային միավորների (քլաստերների) պատահական ընտրություն յուրաքանչյուր ստրատայում:

Երրորդ փուլ. յուրաքանչյուր քլաստերում տնային տնտեսությունների ընտրություն պատահական սկզբով պարբերական քայլի մեթոդով (այցելվել է քլաստերի ամեն 4-րդ տնային տնտեսությունը):

Չորրորդ փուլ. տնային տնտեսությունում չափահասների թվում հարցվողի պատահական ընտրություն վերջին ծննդյան օրվա մեթոդով:

[1] Կոռուպցիայի հանրային ընկալման նախորդ հետազոտություններն իրականացվել են 2008, 2009 և 2010 թվականներին ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում ՀՌԿԿ-Հայաստանի, իսկ 2002 և 2006 թվականներին՝ ԹԻՀԿ կողմից: 2008, 2009 և 2010 թվականների հետազոտությունների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ տվյալադարանները և հարցաշարերը, զետեղված են ՀՌԿԿ-Հայաստանի կայքում՝ www.crrc.am:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի տիպի									
	SS թիվը		Մասնաբաժինը		Ընտրանքի չափը, SS		Ընտրված քլաստերների թիվը		
Մարզ	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Ընդհանուր
Երևան	285112		0.4		560		47		47
Արագածոտն	7482	23784	0.0	0.0	15	47	1	4	5
Արարատ	17734	41629	0.0	0.1	35	82	3	7	10
Արմավիր	21522	38014	0.0	0.1	42	75	4	6	10
Գեղարքունիք	17434	32180	0.0	0.0	34	63	3	5	8
Լոռի	39884	27085	0.1	0.0	78	53	7	4	11
Կոտայք	36106	25974	0.0	0.0	71	51	6	4	10
Շիրակ	39988	25018	0.1	0.0	79	49	7	4	11
Սյունիք	26475	11870	0.0	0.0	52	23	4	2	6
Վայոց Ձոր	4978	7803	0.0	0.0	10	15	1	1	2
Տավուշ	14350	19162	0.0	0.0	28	38	2	3	5
Ընդհանուր	**511065**	**252519**	**0.7**	**0.3**	**1004**	**496**	**84**	**41**	**125**

Աղբյուր. ՀՀ բնակչության 2011թ. մարդահամարի արդյունքները

Հավաքագրված տվյալները կշռվել են օգտագործելով հավանականային կշիռները, չկայացած հարցումների կշիռները, ինչպես նաև ժողովրդագրական կշիռներն ըստ մարզերի և սեռատարիքային խմբերի:

Դաշտային աշխատանքներ

Դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով տվյալները հավաքագրվել են CAPI համակարգով գործող դյուրակիր սարքերով: Պատահական ընտրանքի կանոններին, հարցաթերթին և կից փաստաթղթերին ծանոթանալու համար հոկտեմբերի 14-ին վերապատրաստվել են հարցազրուցավարները և դաշտային աշխատանքների համակարգողը: Տվյալները հավաքագրել են 33 հարցազրուցավար՝ 2019թ. հոկտեմբերի 17-ից դեկտեմբերի 2-ը: Հավաքագրված տվյալների որակը ստուգվել է հետզանգերով՝ հարցվածների շուրջ 17%-ի շրջանում: Հարցման տևողությունը միջինում կազմել է 40 րոպե: Հարցումների համար իրականացվել է շուրջ 6000 այց, որից հարցմամբ է ավարտվել 24 տոկոսը (Երևանում՝ 18, այլ քաղաքներում՝ 23, գյուղերում՝ 38 տոկոսը): Չկայացած հարցումների բաշխումն ըստ պատճառների ներկայացված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2. Անարդյունավետ այցերի պատճառները (%)				
	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
Բնակարանը փակ է, կապ չհաստատվեց	43%	51%	41%	46%
SS-ն կամ դուռը բացողը հրաժարվեց հարցաթերթը լրացնել	39%	35%	40%	38%
Բնակարանը անհասանելի է	12%	4%	3%	8%
SS չափահաս անդամները տանը չէին	2%	5%	7%	4%
Հարցվողը տանը չէր և չէր վերադառնա հետազոտության ընթացքում	2%	2%	7%	3%
Հարցվողը հրաժարվեց առողջական վիճակի պատճառով	1%	1%	2%	1%
Հարցվողը չէր տիրապետում հարցազրույցի լեզվին	1%	1%	1%	1%
Ընդամենը	100%	100%	100%	100%

Տվյալների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ

Հարցազրույցի ավարտից հետո՝ դրա ընթացքի և հարցվածների մասին զրուցավարների արած նշումները թույլ են տվել պարզել, որ՝

- հարցվածների 3/4-ը ցուցաբերել է հետաքրքրվածություն:
- Հարցվածների գրեթե 77%-ը իրազեկ է եղել տրված հարցերի ավելի քան 60%-ին:
- Հարցվածների գերակշիռ մեծամասնության վերաբերմունքը որակվել է որպես անկեղծ: Իր պատասխաններում բնավ ոչ անկեղծ է թվացել հարցվածների ընդամենը 2.3%-ը:
- Հարցերը պարզաբանելու խնդրանքով դիմել է հարցվածների 2/3-ը:
- Տարբեր հաճախականությամբ դժկամություն է դրսևորել հարցվածների շուրջ 40%-ը:

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից պատվիրակած այս՝ կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի 2019թ. հետազոտությունը թվով չորրորդն է, որ Հայաստանի տնային տնտեսությունների շրջանում անցկացրել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը (ՀՌԿԿ-Հայաստան): Նախորդ երեք հետազոտությունները անցկացվել են 2008, 2009 և 2010 թվականներին՝ ԱՄՆ ՄԶԳ հետ գործակցությամբ:

Հետազոտությունները նպատակ են հետապնդել պարզելու՝

- հայաստանցիների ընկալումները Հայաստանի ընդհանուր վիճակի, կոռուպցիայի և դրա դրսևորումների վերաբերյալ,
- կոռուպցիոն երևույթներին առնչվելու նրանց անձնական փորձը,
- կոռուպցիայի նկատմամբ հանրային և անհատական վարքագծի դրսևորումները,
- երկրում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղեկացվածությունը և դրանց գնահատումը,
- կոռուպցիային առնչվող տեղեկատվության հիմնական աղբյուրները:

2019թ. հետազոտությունը ի լրումն հիշյալ նպատակների՝ հետամուտ է եղել պարզելու հայաստանցիների հակակոռուպցիոն ընկալումների և վարքագծի փոփոխությունը 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո, ինչպես նաև համադրելի տվյալների պարագայում՝ վերջին ինը տարիների կտրվածքով կոռուպցիայի և հարակից խնդիրների ընկալումներում տեղ գտած փոփոխությունները:

Հետազոտությամբ խնդիր է դրվել ստեղծել գործնական տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածին՝ պետական կառավարման ոլորտը բարելավելու և հակակոռուպցիոն քաղաքականություններ ու ծրագրեր մշակելու համար:

Հետազոտության ժողովրդագրությունը

Կանանց տեսակարար կշիռը ընտրանքում կազմել է 55.2%, տղամարդկանցը՝ 44.8%: Ընտրանքում համեմատաբար բարձր է եղել 31-40 տարիքային խմբի տեսակարար կշիռը (23.3%), ինչպես նաև լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների ներկայացվածությունը (42.7%): Ընտրանքի 2/3-ի ընտանեկան կարգավիճակը եղել է ամուսնացած: Ընտրանքի գրեթե 1/3-ն աշխատել է լրիվ դրույքով, համեմատաբար բարձր են եղել թոշակառուների և տնային տնտեսուհիների տեսակարար կշիռները (19-ական տոկոս): Ընտրանքում ներկայացված անձանց 1/3-ից ավելին պատասխանել է, որ բավարար գումար ունի սննդի, սակայն՝ ոչ հագուստի համար, իսկ մոտ 47%-ը կազմել են անձինք, ովքեր ունեն բավարար գումար սննդի և հագուստի համար, կարողանում են խնայել, սակայն չեն կարող գնել թանկարժեք իրեր (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ընտրանքի բնութագիրը	
Սեռը	**(%)**

Արական	44.8
Իգական	55.2
Տարիքային խմբերը (%)	
18-ից 22 տարեկան	6.9
23-ից 30 տարեկան	17.5
31-ից 40 տարեկան	23.3
41-ից 50 տարեկան	13.8
51-ից 60 տարեկան	15.3
61-ից 70 տարեկան	14.0
71 տարեկան և ավելի	9.2
Կրթամակարդակը (%)	
Տարրական կրթություն (լրիվ կամ թերի)	0.4
Թերի միջնակարգ կրթություն	4.2
Լրիվ միջնակարգ կրթություն	42.7
Միջնակարգ տեխնիկական կրթություն	21.3
Թերի բարձրագույն կրթություն	3.5
Բարձրագույն կրթություն	27.2
Հետբուհական գիտական աստիճան	0.8
Ընտանեկան դրությունը (%)	
Երբեք ամուսնացած չեմ եղել	17.9
Ամուսնացած եմ	65.6
Ամուսնալուծված եմ	5.4
Այրի	11.1
Սոցիալական վիճակը (%)	
Բավարար գումար չունեն նույնիսկ սննդի համար	14.7
Բավարար գումար ունեն սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է	33.4
Բավարար գումար ունեն սննդի և հագուստի համար, կարողանում են խնայել որոշ գումար, բայց չեն կարող գնել թանկարժեք իրեր	46.6
Կարող են գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց	4.6
Կարող են գնել այն ամենը, ինչ ցանկանում են՝ ներառյալ բնակարան կամ ամառանոց	0.7

Ընտրանքում քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրված անձանց տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել: Այսպես, քաղաքականությամբ շատ հետաքրքրվածները կազմել են հարցվածների 18%-ը, որոշ չափով հետաքրքրվածները՝ 36%, իսկ քիչ հետաքրքրվածները և բոլորովին չհետաքրքրվածները՝ համապատասխանաբար 24% և 22% (գծապատկեր 1): Միաժամանակ, եթե դիտարկենք հետաքրքրվածության երկու ծայրահեղ բևեռները, բոլորովին չհետաքրքրվածներն իրենց տեսակարար կշռով գերազանցել են շատ հետաքրքրվածներին:

Գծապատկեր 1. Քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածությունը (%)



Քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերի նկատմամբ կանանց ու տղամարդկանց հետաքրքրվածության մակարդակը գրեթե համանման է. կանանց դեպքում շատ հետաքրքրվածների և որոշ չափով հետաքրքրվածների հանրագումարը կազմում է 53%, իսկ տղամարդկանց դեպքում՝ 54.4%:

Գծապատկեր 2. Քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածությունը՝ ըստ սեռի (%)



Հետաքրքրվածության գրեթե նույն մակարդակն է գրանցվել Երևանում (54.1%) ու հանրապետության այլ քաղաքներում հարցվածների մոտ (56%): Իրենց հետաքրքրվածությամբ մի փոքր զիջում են գյուղաբնակները (51.8%):

Ինչ վերաբերում է տարիքային տարբեր խմբերին, ապա քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով շատ հետաքրքրվածություն նկատվում է 41 տարեկանից սկսած (գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Որքանո՞վ եք հետաքրքրված քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով՝ ըստ տարիքային խմբերի (%)



Սոցիալական բարեկեցությունը դրական է ազդում քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության վրա: Այսպես, քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով առավել բարձր հետաքրքրվածություն առկա է անձանց մոտ, ովքեր կարող են իրենց թույլ գնել այն ամենը, ինչ կամենան (64.8%): Երկրորդ տեղում անձինք են, ովքեր կարող են գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց (61.8%): Ակտիվության գրեթե նույն մակարդակն է դրսևորվել անձանց մոտ, ովքեր բավարար գումար ունեն սննդի և հագուստի համար, կարողանում են խնայել, բայց չեն կարող գնել թանկարժեք իրեր (54.8%), և նրանց մոտ, ովքեր բավարար գումար ունեն սննդի համար, բայց հագուստ գնել դժվարանում են (54.1%): Ակտիվության ամենացածր մակարդակն ունեն սոցիալապես անապահովները, ովքեր գումար չունեն նույնիսկ սննդի համար (46.1%) (գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Որքանո՞վ եք հետաքրքրված քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով՝ ըստ սոցիալական վիճակի (%)



Ինչպես երևում է 5-րդ գծապատկերից, կրթամակարդակի բարձրացման հետ մեկտեղ աճում է հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածությունը: Այսպես, եթե բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների 61.3%-ն է դրսևորում հետաքրքրվածություն, ապա ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների՝ 48.1%-ը և միջին մասնագիտական ու թերի բարձրագույն կրթություն ունեցողների 56.1%-ը:

Գծապատկեր 5. Որքանո՞վ եք հետաքրքրված քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով՝ ըստ կրթամակարդակի (%)



Հարցվածների գրեթե 2/3-ը կարողանում է վերահսկել իր կյանքի ընթացքը, ի դեպ՝ դա անում են լիովին 35%-ը և մեծամասամբ՝ 29%-ը: Հարցվածների 28%-ը չեզոք դիրքերում է, քանի որ որոշ դեպքերում վերահսկում է, իսկ որոշ դեպքերում՝ ոչ, իսկ 8%-ն ունի պասիվ դիրքորոշում, որից մոտ 3%-ը բոլորովին չի վերահսկում իր կյանքը (գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Որքանո՞վ կարող եք ընտրել և վերահսկել Ձեր կյանքի ընթացքը (%)



Հայաստանում կանայք իրենց կյանքը վերահսկելու հնարավորությամբ զիջում են տղամարդկանց (աղյուսակ 4): Այսպես, եթե տղամարդկանց 42.5%-ը լիովին է վերահսկում իր կյանքը, ապա կանանց 29.2%-ն է նշել այդ հնարավորության մասին:

Աղյուսակ 4. Որքանո՞վ կարող եք ընտրել և վերահսկել Ձեր կյանքի ընթացքը՝ ըստ սեռի (%)

	Արական (N=670)	Իգական (N=830)
Լիովին վերահսկում եմ	42.5	29.2
Մեծամասամբ վերահսկում եմ	26.1	30.6
Որոշ դեպքերում վերահսկում եմ, որոշ դեպքերում՝ ոչ	23.2	32.4
Մեծամասամբ չեմ վերահսկում	5.2	5.6
Բոլորովին չեմ վերահսկում	3.0	2.3

Տարիքային խմբերում իրենց կյանքի ընթացքը տնօրինելու մասին նշել են երիտասարդ տարիքային խմբերը: Տարիքի աճի հետ մեկտեղ՝ 41-ից հետո, նվազում է հատկապես կյանքը լիովին վերահսկելու հնարավորությունը (գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Որքանո՞վ կարող եք ընտրել և վերահսկել Ձեր կյանքի ընթացքը՝ ըստ տարիքային խմբերի (%)



Վերջին մեկուկես տարվա ընթացքում հարցվածների ակտիվությունը հանգում է ծանոթների հետ երկրում և համայնքում տեղի ունեցող իրադարձությունների քննարկումներին (գծապատկեր 8): Ի դեպ՝ երկրում տեղի ունեցող իրադարձությունների քննարկումներում շատ ակտիվ է հարցվածների 17%-ը, իսկ ավելի շուտ ակտիվ՝ 25%-ը: Համայնքային իրադարձությունների քննարկումներում՝ 13%-ը շատ ակտիվ է, իսկ 26%-ը՝ ավելի շուտ ակտիվ: Հանրային երթերին և ցույցերին մասնակցության հարցում ակտիվություն է դիտարկվել հարցվածների 20%-ի մոտ: Հարցվածները պասիվ մասնակցություն ունեն հատկապես համատիրության ընդհանուր ժողովներին (82%), համայնքի ավագանու նիստերին (79%), կուսակցությունների կողմից կազմակերպված քննարկումներին (78%), հասարակական կազմակերպությունների նախաձեռնած հանդիպումներին (77%):

Գծապատկեր 8. Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր ակտիվությունը վերջին մեկուկես տարվա ընթացքում (%)



ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

1.1 Հայաստանի ընդհանուր իրավիճակի ընկալումը

Հարցին, թե որոնք են այսօր Հայաստանում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, հարցվածների ավելի քան մեկ քառորդը պատասխանել է՝ գործազրկությունը (գծապատկեր 9): Գործազրկությանը հաջորդել է աղքատությունը (14%): Ցածր աշխատավարձը որպես առաջնահերթ խնդիր առանձնացրել է հարցվածների 12.6%-ը: Հարցվածների ձայների 10%-ի սահմանագիծը եզրափակել են սոցիալական ոլորտի հիմնախնդիրները (10.8%): Կոռուպցիան որպես առաջնահերթ խնդիր ճանաչել է հարցվածների 5.7%-ը: Հարցվածների գրեթե նույն բաժինն առաջնահերթ խնդիր է համարել արտագաղթը (5.9%): Ակնհայտ է, որ հարցվածներին ավելի շատ մտահոգել են Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, քան քաղաքականները: Քաղաքականներից նրանց ավելի շատ հուզել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը (5.3%):

Գծապատկեր 9. Այսօր Հայաստանում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները (%)

Հարկ է նշել, որ գործազրկությունը նույնչափ մտահոգիչ է եղել թե՛ Հայաստանի այլ քաղաքներում (28.1%) և թե՛ գյուղական բնակավայրերում (29.5%): Երևանցիներին ևս ամենաշատը հուզել է գործազրկությունը (19.5%): Երևանցիների 1/7-ը որպես խնդիր նշել է սոցիալապես ոչ նշանակալի աշխատավարձերը: Աղքատության խնդիրն առավել ընդգծված է գյուղաբնակների մոտ (15.4%): Կոռուպցիան որպես խնդիր ավելի հաճախ դիտարկվել է Երևանում (6.2%), քան այլ քաղաքներում (5.5%) և գյուղերում (5.4%) (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Այսօր Հայաստանի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները՝ ըստ բնակավայրի տեսակի (%)

	Երևան (N=478)	Այլ քաղաքներ (N=460)	Գյուղեր (N=563)
Գործազրկությունը	19.5	28.1	29.5
Ցածր աշխատավարձը	15.4	10.4	12.2
Աղքատությունը	14.1	12.2	15.4
Սոցիալական ոլորտը	13.8	11.3	7.6
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը	6.9	5.5	3.6
Կոռուպցիան	6.2	5.5	5.4
Սոցիալական անարդարությունը	4.0	3.6	4.6
Ներքին քաղաքական խնդիրները	3.7	2.5	2.2
Ֆիզիկական ենթակառուցվածքները	3.0	2.1	3.1
Սղաճը/բարձր գները	3.0	2.5	2.8
Արտագաղթը/Էմիգրացիան	2.2	6.6	8.6
Իրավական համակարգը	1.8	1.9	1.3
Տնտեսությունը	1.8	1.4	0.9
Այլ	1.8	1.2	0.7
Արտաքին քաղաքական խնդիրները	1.8	3.0	1.4
Հանցավորության մակարդակը	0.4	0.4	0.0
Բնական ռեսուրսների անխնա շահագործումը	0.3	0.8	0.2
Պաշտպանությունը (բանակը)	0.2	0.5	0.4
Օտարերկրյա ներդրումների պակասը	0.0	0.4	0.0

Ուշագրավ է Հայաստանի առաջնահերթ խնդիրների դիտարկումը քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության տարբեր մակարդակ ունեցող հարցվածների տեսանկյունից: Այդ նպատակով քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով շատ հետաքրքրվածներն ու որոշ չափով հետաքրքրվածները պայմանականորեն որակվել են որպես «ակտիվ դիրքորոշում ունեցողներ», իսկ քիչ հետաքրքրվածները և բոլորովին չհետաքրքրվածները՝ «պասիվ դիրքորոշում ունեցողներ»:

Ինչպես հետևում է 6-րդ աղյուսակից, Հայաստանի առաջնահերթ խնդիրներով ավելի շատ մտահոգված են պասիվ դիրքորոշում ունեցողները: Այսպես, առաջնահերթ երեք խնդիրները նրանց կողմից նշվել են ավելի հաճախ. գործազրկությունը՝ 30.6%, աղքատությունը՝ 17.4% և ցածր աշխատավարձերը՝ 12.8%: Ուշադրության է արժանի այն, որ կոռուպցիան որպես առաջնահերթ խնդիր ավելի շատ դիտարկվում է ակտիվ (8.9%), քան պասիվ դիրքորոշում ունեցողների (2.8%) մոտ:

Աղյուսակ 6. Այսօր Հայաստանի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)				
	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Գործազրկությունը	21.3	24.8	27.3	30.6
Աղքատությունը	11.3	12.9	14.8	17.4
Ցածր աշխատավարձը	11.1	12.3	14.2	12.8
Սոցիալական ոլորտի խնդիրները	10.2	11.7	11.6	8.6
Արտագաղթը/Էմիգրացիան	5.4	6	5.5	6.8
Սղաճը/բարձր գները	1.3	3.1	3.5	2.7
Ֆիզիկական ենթակառուցվածքները	1.8	2.7	3.2	3.2
Սոցիալական անարդարությունը	5	5.2	1.9	3.9
Կոռուպցիան	8.9	6.2	4.8	2.8
Իրավական համակարգը	3.5	1.2	1.5	0.8
Հանցավորության մակարդակը	0.6	0.2	0.4	0
Ներքին քաղաքական խնդիրները	4.7	2.9	2	1.6
Արտաքին քաղաքական խնդիրները	3.5	2.3	0.7	1.6
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը	5.6	5	6.1	4.4
Բն. ռես. անխնա շահագործումը	0.4	0.7	0.4	0.1
Օտարերկրյա ներդրումների պակասը	0.2	0.1	0.2	0
Տնտեսությունը	2.8	1.3	0.6	0.9
Պաշտպանությունը (բանակը)	0.6	0.1	0.7	0.3
Այլ	1.6	1.3	0.6	1.3

2010թ. հետազոտության արդյունքների[2] հետ համեմատականը վկայում է, որ գործազրկությունը շարունակում է մնալ հայ հասարակությանը հուզող թիվ մեկ խնդիրը: Հարկ է նշել, որ այս տարիների ընթացքում խնդրով մտահոգվածների տեսակարար կշիռը էական փոփոխություններ չի կրել (2008թ.՝ 27.8%, 2009թ.՝ 27.8%, 2010թ.՝ 27.2%):

Ինչ վերաբերում է հանրային կառավարմանն առնչվող խնդիրներին, հարցվածների 26.4%-ը նշել է կադրային անհաջող նշանակումները (գծապատկեր 10): Հարցվածների կարծիքը գրեթե հավասարաչափ է բաշխվել նախկին իշխանությունների ճնշումները և հին կադրերի սաբոտաժը (14.4%) ու հանրային կառավարման փորձի բացակայությունը (14%) որպես հիմնախնդիր առանձնացնելիս: Հանրային կառավարմանն առնչվող խնդիրներում իրենց տեղն են գտել օրենքների որակին և իրավակիրարկման պրակտիկային վերաբերողները: Օրենքի կիրարկման թերի լինելը նշել է հարցվածների 12.4%-ը, իսկ օրենսդրության անկատարությունը՝ 7.3%-ը: Զարգացման հեռանկարի ոչ հստակ լինելը հուզել է հարցվածների 11.2%-ին: Հարցվածների 6.8%-ը հանրային կառավարման խնդիր է համարել արտաքին ճնշումները՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրավիճակով, իսկ 6.4%-ը՝ իշխանություն-ժողովուրդ թույլ կապը:

[2] Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների 2010թ. հետազոտությամբ ներկայացված են ոչ միայն 2010թ.-ի, այլև նախորդ տարիների՝ 2008-ի և 2009-ի հետազոտությունների արդյունքները, www.crrc.am:

Գծապատկեր 10. Հանրային կառավարմանն առնչվող այսօրվա խնդիրները Հայաստանում (%)



Հանրային կառավարման խնդիրների դիտարկումը՝ ըստ ակտիվ և պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածների վկայում է, որ նրանք այդ խնդիրների վերաբերյալ ունեն հետաքրքրվածության գրեթե նույն մակարդակը՝ էական մեկ տարբերությամբ, որ նախկին իշխանությունների ճնշումները և հին կադրերի սաբոտաժն ավելի շատ հուզել է ակտիվ (33.3%), քան պասիվ դիրքորոշում ունեցողներին (23%) (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Հանրային կառավարմանն առնչվող այսօրվա խնդիրները Հայաստանում՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Կադրային անհաջող նշանակումները	27.9	24.7	27.9	26.2
Նախկին իշխանությունների ճնշումները և հին կադրերի սաբոտաժը	17.6	15.7	13	9.9
Հանրային կառավարման փորձի բացակայությունը	15.1	13.1	13.1	15.7
Զարգացման հեռանկարի ոչ հստակ լինելը	9.5	12	11.7	10.9
Օրենքի կիրարկման թերի լինելը	9.1	12.5	14.5	13.3
Արտաքին ճնշումները	7.6	8.7	5	4.7
Անկատար օրենսդրությունը	6.6	6.1	7.9	9.7
Իշխանություն-ժողովուրդ թույլ կապը	4.8	6.6	5.9	8.2
Խնդիրներ գոյություն չունեն	1	0.3	0.5	1
Այլ	0.7	0.2	0.5	0.5

1.2 Կոռուպցիայի ընկալումը

Չնայած որ կոռուպցիան որպես առաջնահերթ խնդիր նշել է հարցվածների ընդամենը 5.7%-ը, սակայն հարցվածների 90%-ը կարևորել է դրա լրջությունը: Ի դեպ՝ հարցվածների 36.5%-ը կոռուպցիան որակել է որպես չափազանց լուրջ հիմնախնդիր, 28.3%-ը՝ որպես բավականին լուրջ, իսկ 25.3%-ը՝ որոշ չափով լուրջ: Կոռուպցիան բնավ լուրջ խնդիր չի համարել հարցվածների ընդամենը 3.9%-ը: Հարցվածների 3.1%-ի կարծիքով Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի, իսկ 2.9%-ը ընտրել է պատասխանի «չգիտեմ» տարբերակը (գծապատկեր 11):

Գծապատկեր 11. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար (%)



Անհրաժեշտ է փաստել, որ 2010թ. հետազոտության արդյունքներով՝ կոռուպցիան լուրջ հիմնախնդիր է ընկալվել հարցվածների 95%-ի կողմից: Ի դեպ՝ հարցվածների 59.8%-ը կոռուպցիան որակել է որպես չափազանց լուրջ հիմնախնդիր, 21.7%-ը՝ որպես բավականին լուրջ, իսկ 13.4%-ը՝ որոշ չափով լուրջ:

Ինչպես երևում է 12-րդ գծապատկերից, կոռուպցիան լուրջ հիմնախնդիր են համարել ավելի շատ Երևանում 2019թ. հարցվածները, քան հանրապետության այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում հարցվածները:

Գծապատկեր 12. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ բնակավայրերի (%)



Տարիքային խմբերով դիտարկելիս ակնառու է, որ կոռուպցիայի լրջության ընկալումն ավելի սուր է միջին և ավելի տարիքի անձանց շրջանում (գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ տարիքային խմբերի (%)



Կոռուպցիայի հիմնախնդրի լրջության ընկալումը տարբերվում է նաև ըստ հարցվածների կրթամակարդակի. եթե ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթամակարդակ ունեցողների 35.6%-ն է գտել, որ կոռուպցիան չափազանց լուրջ հիմնախնդիր է, ապա միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեցողների 39.7%-ը ու բարձրագույն և հետբուհականի՝ 43.3%-ը (գծապատկեր 14):

Գծապատկեր 14. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ կրթամակարդակի (%)



Ստորև բերված 8-րդ աղյուսակից հետևում է, որ կոռուպցիան լուրջ հիմնախնդիր են համարում ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ դիրքորոշում ունեցողները: Ուշագրավ է, որ կոռուպցիան որպես չափազանց լուրջ հիմնախնդիր ավելի հաճախ համարել են քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով շատ հետաքրքրվածները (40.5%):

Աղյուսակ 8. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Չափազանց լուրջ է	Բավականին լուրջ է	Որոշ չափով լուրջ է	Բնավ լուրջ չէ	ՀՀ-ում կոռուպցիա չկա
Շատ եմ հետաքրքրված (N=266)	40.5	25.9	24.3	3.6	5.7
Որոշ չափով եմ հետաքրքրված (N=555)	35.6	33.5	25.7	4.3	0.9
Քիչ եմ հետաքրքրված (N=372)	37.5	28.1	29.7	4.1	0.7
Բոլորովին հետաքրքրված չեմ (N=307)	38.5	25.7	24.0	4.1	7.8

Հարկ է նշել, որ կոռուպցիան հատկապես լուրջ հիմնախնդիր է այն հարցվածների համար, ովքեր չեն վերահսկում իրենց կյանքի ընթացքը: Այսպես, իրենց կյանքը բոլորովին չվերահսկող հարցվածների կեսից ավելին նշել է, որ կոռուպցիան չափազանց լուրջ հիմնախնդիր է՝ ի տարբերություն նրանց, ովքեր լիովին վերահսկում են իրենց կյանքը: Վերջիններիս ընդամենը 38%-ն է կոռուպցիան համարել որպես չափազանց լուրջ խնդիր: Միաժամանակ նրանց 4.4%-ը գտել է, որ կոռուպցիան բնավ էլ լուրջ խնդիր չէ, իսկ 6.3%-ը՝ որ Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ սեփական կյանքի ընթացքը վերահսկելու հատկանիշի (%)

	Չափազանց լուրջ է	Բավ. լուրջ է	Որոշ չափով լուրջ է	Բնավ լուրջ չէ	ՀՀ-ում կոռուպցիա չկա
Բոլորովին չեմ վերահսկում (N=39)	56.5	29.3	14.1	0.0	0.0
Մեծամասամբ չեմ վերահսկում (N=81)	45.9	25.7	25.0	3.4	0.0
Որոշ դեպքերում վերահսկում եմ, որոշ դեպքերում՝ ոչ (N=424)	34.6	32.5	28.9	3.0	1.0

Մեծամասամբ վերահսկում եմ (N=429)	37.3	34.0	21.4	5.1	2.2
Լիովին վերահսկում եմ (N=527)	38.0	23.2	28.1	4.4	6.3

Կոռուպցիայի՝ որպես հիմնախնդրի ընկալման դիտարկումն ըստ սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցողների ներկայացված է աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Որքանով է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր Հայաստանի հանրային ոլորտի համար՝ ըստ սոցիալական վիճակի (%)

	Չափազանց լուրջ է	Բավականին լուրջ է	Որոշ չափով լուրջ է	Բնավ լուրջ չէ
Բավարար գումար չունեն նույնիսկ սննդի համար (N=238)	34.3	33.1	23.6	9
Բավարար գումար ունեն սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է (N=488)	36.5	31.1	28.4	4
Բավարար գումար ունեն սննդի և հագուստի համար, կարողանում են խնայել որոշ գումար, բայց չեն կարող թանկարժեք իրեր (N=574)	43.4	28.7	25.5	2.4
Կարող են գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց (N=50)	25.2	33	34.2	7.5
Կարող են գնել այն ամենը, ինչ ցանկանում են՝ ներառյալ բնակարան կամ ամառանոց (N=9)	52.6	18.3	29.2	0

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

2.1. Կոռուպցիոն վարքագծի ընդհանուր ընկալումները

Հարցվածների կոռուպցիոն վարքագծի ընկալումը գնահատելու նպատակով նրանց առաջարկվել է գործողությունների որոշակի ցանկ՝ խնդրելով առանձնացնել կոռուպցիայի հնարավոր դրսևորումները: Հարցվածների պատկերացումները կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ բավականաչափ հստակ են, և կարելի է փաստել կոռուպցիոն առավել հայտնի երևույթների (դատավորին վճարելը՝ ցանկալի դատավճիռ կայացնելու համար, ճանապարհային ոստիկանին գումար առաջարկելը՝ խախտումը չարձանագրելու համար) վերաբերյալ նրանց իրազեկվածության մասին (աղյուսակ 11) :

Աղյուսակ 11. Արդյո՞ք սա կոռուպցիայի դրսևորում է, թե՞ ոչ (%)

	Այո	Ոչ
Դատավորին վճարելը՝ Ձեզ ցանկալի դատավճիռ կայացնելու համար	96	4
Ճանապարհային ոստիկանին գումար առաջարկել՝ խախտումը չարձանագրելու համար	94	6
Կապերի/ծանոթությունների օգտագործումը՝ Ձեր միակ որդուն բանակից ազատելու համար	89	11
Պաշտոնեական ծանոթությունների օգտագործումն ընկերոջ բիզնեսը հարկային տեսչության ավելորդ միջամտություններից զերծ պահելու համար	86	14
Պետական գնումներով կնքված պայմանագրի գումարի մի մասի թողնելը գործարքը սատարած պաշտոնյային	85	15
Պաշտոնատար անձի միջնորդությունը՝ բարեկամին աշխատանքի ընդունելու համար	75	25
Գործարարների կողմից կուսակցություններին կատարվող նախընտրական նվիրատվությունները	68	32
Պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալը	62	38
Պետական պաշտոնատար անձի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումը երեխաներին դպրոց տանելու համար	58	42
Թոշակներ և/կամ նպաստներ ստանալու համար գումար թողնելը այն բաժանող ծառայողին	56	44
Քվեարկության օրը որևէ կուսակցության կողմից ընտրական հանձնաժողովի անդամների համար սննդի հարցը լուծելը	40	60
Բժշկին նվեր տալը՝ որպես շնորհակալություն՝ ուշադիր վերաբերմունքի համար	39	61
Գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումը	39	61
Գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումները	33	67
Բանկում գրավադրված գույքի առգրավումը բանկի կողմից՝ վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում	27	73
Մարտի 8-ին ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը (աշակերտի կամ նրա ծնողի կողմից)	22	78
Ծաղիկ կամ միրգ քաղելը հարևանի այգուց՝ առանց վերջինիս թույլտվության	16	84

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը որպես կոռուպցիա է բնորոշել նաև կապերի/ծանոթությունների օգտագործումը՝ միակ որդուն բանակից ազատելու համար (89%), պաշտոնեական ծանոթությունների օգտագործումը՝ ընկերոջ բիզնեսը հարկային տեսչության ավելորդ միջամտություններից զերծ պահելու համար (86%), պետական գնումներով կնքված պայմանագրի գումարի մի մասի թողնելը գործարքը սատարած պաշտոնյային (85%): Հարցվածների մոտավորապես 3/4-ը որպես կոռուպցիայի դրսևորման եղանակ առանձնացրել է պաշտոնատար անձի միջնորդությունը՝ բարեկամին աշխատանքի ընդունելու համար:

Չնայած կոռուպցիայի վերաբերյալ հարցվածների իրազեկվածությանը, կոռուպցիայի որոշ դրսևորումներ նրանց թվում են հանդուրժելի կամ նորմալ երևույթ. հարցվածների 78%-ը կոռուպցիա չի համարել մարտի 8-ին ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը, գործարարների կողմից պետական հիմնադրամներին հատկացումները (67%), բժշկին որպես շնորհակալություն նվեր տալը և գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումը (համապատասխանաբար՝ 61-ական տոկոս), քվեարկության օրը որևէ կուսակցության կողմից ընտրահանձնաժողովի անդամների սննդի հարցը լուծելը (60%):

Միաժամանակ հարցվածները հստակ զատել են պայմանագրային պարտավորությունների չկատարման համար գույքի առգրավումը կամ գողությունը կոռուպցիայի դրսևորումներից: Նշված երևույթները ոչ կոռուպցիոն են գնահատել հարցվածների համապատախանաբար 73 և 84%-ը: Հարկ է նշել, որ կոռուպցիայի առավել հայտնի դրսևորումների վերաբերյալ կրթամակարդակով և բնակավայրի տիպով պայմանավորված էական տարբերություններ չկան: Այդուհանդերձ, կոռուպցիայի որոշ դրսևորումների ընկալումները տարբերվում են. այսպես, եթե պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալը կոռուպցիոն դրսևորում է համարում ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների 67%-ը, ապա բարձրագույն կրթություն ունեցողների՝ մոտ 55%-ը: Նմանատիպ պատկեր է թոշակներ և/կամ նպաստներ բաժանող ծառայողին գումար թողնելու դեպքում. եթե ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների 59.7%-ն է համոզված, որ դա կոռուպցիայի դրսևորում է, ապա բարձրագույն կրթություն ունեցողների 47.4%-ն է կիսում այդ կարծիքը: Ի դեպ, երևանցիների 41.5%-ն է թոշակներ և/կամ նպաստներ բաժանող ծառայողին գումար թողնելը բնութագրում որպես կոռուպցիա, մինչդեռ Հայաստանի այլ քաղաքներում այդպես են կարծում հարցվածների 58.8%-ը, իսկ գյուղերում՝ 64.7%-ը: Ըստ բնակավայրերի տիպի կոռուպցիայի ընկալման տարբերություն առկա է նաև գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումը որակելիս: Եթե գյուղաբնակների ու այլ քաղաքների բնակիչների համապատասխանաբար 30.5% և 41%-ն են դա որակում որպես կոռուպցիայի դրսևորում, ապա երևանցիների՝ 46%-ը:

Հարցվածների վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ բացասական, դրական և չեզոք (գծապատկեր 15): Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (81.4%) կոռուպցիայի նկատմամբ ցուցաբերում է ընդգծված անհանդուրժողականություն: Այս խումբը գտնում է, որ կոռուպցիան չարիք է և այն պետք է վերացնել: Հարցվածների մոտավորապես 10%-ի դիրքորոշումը չեզոք է: Սրանք կոռուպցիան

համարում են բնական/անխուսափելի երևույթ, որի հետ պետք է հաշտվել: Կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքը դրական է հարցվածների շուրջ 7%-ի մոտ: Վերջիններս իրենց կարծիքը փաստարկել են նրանով, որ կոռուպցիան նվազեցնում է բյուրոկրատական քաշքշուքները և հեշտացնում հարցերի լուծումը, առանց կոռուպցիայի կառավարման համակարգը չի կարող արդյունավետ գործել, կոռուպցիան նպաստում է բիզնես գործունեությանը: Հարցի պատասխանը չի ունեցել հարցվածների 2.4%-ը:

Գծապատկեր 15. Կոռուպցիայի մասին կարծիքները (%)



.

Հետաքրքիր է այն, որ թե՛ ակտիվ, թե՛ պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կոռուպցիան դիտարկում է որպես չարիք (աղյուսակ 12): Սակայն, պասիվ դիրքորոշում ունեցողների մոտ ավելի ընդգծված է կոռուպցիան բնական և անխուսափելի երևույթ համարելու մոտեցումը:

Աղյուսակ 12. Կոռուպցիայի մասին կարծիքները՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Կոռուպցիան չարիք է և այն պետք է վերացնել/չեզոքացնել	84.4	83.7	83.1	82.2
Կոռուպցիան բնական/անխուսափելի երևույթ է և պետք է դրա հետ հաշտվել	7.7	8.7	10.6	12.1
Կոռուպցիան նվազեցնում է բյուրոկրատական քաշքշուքը և հեշտացնում հարցերի լուծումը	6.8	5.8	3.1	4.5
Կոռուպցիան նպաստում է բիզնես գործունեությանը	1	0.5	1.6	0.3
Առանց կոռուպցիայի՝ կառավարման համակարգը չի կարող արդյունավետ գործել	0	1	1.4	0.7
Այլ	0	0.1	0.3	0.2

Ըստ հարցման արդյունքների՝ կոռուպցիայի հիմնական դրդապատճառը որևէ գործընթաց արագացնելն է (26.7%), այսինքն՝ քայլերի ձեռնարկումը բյուրոկրատական գործընթացների և քաշքշուքների վրա ծախսվող ժամանակը տնտեսելու համար: Հարցվածների 16.1%-ը որպես դրդապատճառ նշել է խնդրի լուծման օրինական տարբերակի բացակայությունը: Իրավական կարգավորումների անկատարությունը որպես կոռուպցիայի դրդապատճառ առանձնացրել է հարցվածների 14.4%-ը՝ նշելով, որ խնդիրների լուծումը կոռուպցիոն եղանակով հնարավորություն է տալիս խուսափել օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից: Որպես այլ դրդապատճառներ հարցվածները նշել են պատասխանատվությունից խուսափելը (12.4%), արտոնյալ վերաբերմունքի արժանանալը (10.4%), եկամտի այլընտրանքային աղբյուր ունենալը (8.5%) և այլն (գծապատկեր 16):

2010թ. հետազոտության արդյունքների հետ համեմատականից կարելի է եզրակացնել, որ կոռուպցիայի հիմնական դրդապատճառները չեն փոխվել: Միաժամանակ, եթե 2010թ. խնդրի լուծման այլ տարբերակի բացակայությունը որպես կոռուպցիայի դրդապատճառ նշել են հարցվածների 31%-ը, ապա 2019թ.՝ դրա մոտ կեսը (16.1%):

Գծապատկեր 16. Կոռուպցիոն եղանակով խնդիրները լուծելու հիմնական դրդապատճառները (%)



Կոռուպցիայի ազդեցությունը հարցվողի և նրա շրջապատի/համայնքի վրա շատ մեծ է համարել հարցվածների 11%-ը: Կոռուպցիայի ազդեցությունն ավելի շուտ մեծ է որակել 26.6%-ը: Հարցվածների կեսից ավելին կոռուպցիայի ազդեցությունը համարել է ավելի շուտ փոքր և

աննշան: Հարցվածների 4.7%-ի կարծիքով Հայաստանում կոռուպցիա չկա: Հարցի «չգիտեմ» պատասխանն ընտրել է հարցվածների 7.5%-ը (գծապատկեր 17):

Գծապատկեր 17. Կոռուպցիայի ազդեցությունը Ձեր և Ձեր շրջապատի վրա (%)



Հարկ է նշել, որ կոռուպցիայի ազդեցության ընկալումն համեմատաբար բարձր է կանանց մոտ (աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Կոռուպցիայի ազդեցությունը՝ ըստ սեռի (%)

	Արական (N=675)	Իգական (N=824)
Շատ մեծ է	10.1	13.4
Ավելի շուտ մեծ է	26.3	30.7
Ավելի շուտ փոքր է	28.5	26.0
Աննշան է	28.9	25.7
Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի	6.2	4.3

Ինչ վերաբերում է տարիքային տարբեր խմբերի մոտ կոռուպցիայի ազդեցության ընկալմանը, ապա համեմատական առումով դրան ավելի ցածր նշանակություն են տվել 31-40 տարիքային խմբում ընդգրկվածները. նրանց 9%-ը կոռուպցիայի ազդեցությունը գնահատել է որպես շատ մեծ, իսկ 22%-ը՝ ավելի շուտ մեծ (գծապատկեր 18):

Գծապատկեր 18. Կոռուպցիայի ազդեցությունն՝ ըստ տարիքային խմբերի (%)



Կոռուպցիայի ազդեցության ընկալումը բնակավայրերի կտրվածքով դիտարկելիս կարելի է պարզել, որ կոռուպցիայի ազդեցությունն ավելի շատ երևանցիներն են (52.6%) մեծ որակել, քան Հայաստանի այլ քաղաքների (42.8%) և գյուղական բնակավայրերի բնակիչները (29%) (գծապատկեր 19):

Գծապատկեր 19. Կոռուպցիայի ազդեցությունն՝ ըստ բնակավայրի տիպի (%)



2.2. Կոռուպցիոն վարքագծի ընկալումները՝ ըստ ոլորտների և հաստատությունների

Հարցվածները բնութագրել են նաև Հայաստանում կոռուպցիայի տարածվածությունը ներկայիս և նախորդ իշխանությունների օրոք: Նրանց 46.5%-ը նշել է, որ ներկայումս կոռուպցիան քիչ է տարածված, իսկ 36%-ը համարել է, որ կոռուպցիան որոշ ոլորտներում շատ տարածված է: 2018թ. ապրիլ-մայիսից հետո կոռուպցիայի բնավ չլինելու կարծիքին են եղել հարցվածների 7.5%-ը: Կոռուպցիայի համատարած լինելու մասին նշել է հարցվածների ընդամենը 4.4%-ը: «Չգիտեմ» տարբերակն ընտրել է հարցվածների 5.3%-ը (գծապատկեր 20):

Գծապատկեր 20. Կոռուպցիայի տարածվածությունը Հայաստանում նախորդ և ներկայիս իշխանությունների օրոք (%)



Պատկերը շրջադարձորեն փոխվում է կոռուպցիայի տարածվածությունը մինչ 2018թ. ապրիլ-մայիս ամիսները դիտարկելիս: Այսպես, հարցվածների գերակշիռ մեծամասնության (83.7%) կարծիքով նշված ժամանակահատվածում կոռուպցիան համատարած էր և առկա էր բոլոր ոլորտներում:

Ի պատասխան տարբեր հաստատություններում կոռուպցիայի մակարդակը գնահատելու հարցին՝ հարցվածները որպես կոռումպացված հաստատություններ առավել հաճախ նշել են դատարանները: Հարցվածների 12%-ը դրանց տվել է «մեծապես կոռումպացված» և 37%-ը՝ «որոշ չափով կոռումպացված» բնութագրերը: Դատարաններին հետևել են ՀԼՄ-ները և դատախազությունը՝ համանման բնութագրերի հանրագումարով դրանց կոռումպացվածությունը համապատասխանաբար գնահատվել է 44% և 43%: Ցանկում ընդգրկված այլ հաստատությունների ևս բնորոշ է կոռումպացվածության որոշակի մակարդակ (գծապատկեր 21):

2010թ.-ի հետազոտության արդյունքների համեմատականից հետևում է, որ դատարանները և դատախազությունը հայաստանցիների ընկալումներով շարունակում են մնալ որպես ամենակոռումպացված հաստատությունները: Բացի այդ, կոռումպացված հաստատությունների շարքը համալրել են կրոնական կազմակերպությունները և ՀԼՄ-ները, որոնք նախկինում չեն բնութագրվել այդպիսին:

Հարկ է նշել, որ «բնավ չկոռումպացված» վարկանիշի առաջատարը ՀՀ վարչապետն է (75%): Նրան հաջորդում է ՀՀ նախագահը՝ իր աշխատակազմով (57%): Որպես «բնավ չկոռումպացված» ավելի հաճախ նշվել են ՀՀ վարչապետի աշխատակազմը, նախարարությունները (38%) և մարդու իրավունքների պաշտպանը (36%): Ընկալումները բավական հակասական են Հայ առաքելական եկեղեցու պարագայում. հարցվածների 29%-ը այն ընկալում է որպես կոռումպացված հաստատություն, իսկ մյուս մասը կամ 36%-ը՝ որպես բնավ չկոռումպացված: Անհրաժեշտ է նշել,

որ դիտարկվող հարցի պատասխաններում արձանագրվել է «չգիտեմ» տարբերակի բավականաչափ բարձր բաժին:

Գծապատկեր 21. Տարբեր հաստատությունների կոռումպացվածության աստիճանը (%)



Ինչ վերաբերում է ծառայությունների և ոլորտների կոռումպացվածությանը, ապա հարցվածների 62%-ը մեծապես (18%) և որոշ չափով (44%) կոռումպացված է համարել առողջապահության ոլորտը (գծապատկեր 22): Ի դեպ՝ 2010թ. հետազոտությունների արդյունքների վրա հիմնվելով՝ կարելի է փաստել, որ առողջապահությունը շարունակում է պահպանել կոռումպացված ոլորտ լինելու իր վարկանիշը:

Հարցվածների 44%-ի համար բժշկական սոցիալական փորձաքննության ծառայությունները ևս ընկալվում են կոռումպացված, ընդ որում՝ հարցվածների 11%-ի կարծիքով մեծապես, իսկ 33%-ի՝ որոշ չափով: Այս ծառայություններին հետևում են սոցիալական ապահովության ծառայությունները (41%), լրատվական ծառայությունները և քրեակատարողական հիմնարկները՝ յուրաքանչյուրը 39% կոռումպացվածության աստիճանով: Ցանկում նշված այլ ծառայությունները նույնպես ընկալվում են կոռումպացված, բայց ավելի ցածր հաճախականությամբ:

Պետք է նշել, որ «չգիտեմ» պատասխանը տվածների բաժինը որոշ ոլորտների կամ ծառայությունների համար բավականին մեծ է. պետական գնումների դեպքում այն 48% է,

լիցենզավորման/թույլտվությունների և հավատարմագրման ծառայությունների դեպքում՝ 45%, իսկ իրավաբանական անձանց/կազմակերպությունների պետական գրանցման դեպքում՝ 44%:

Բնավ չկոռումպացված են ընկալվում կոմունալ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա) և համայնքային ծառայությունները (աղբահանություն, հողհատկացման, շինարարության թույլտվություններ, քաղաքային տրանսպորտ և այլն): Այս ծառայությունները կոռումպացված են համարել հարցվածների համապատասխանաբար 12 և 16%-ը, իսկ բնավ չկոռումպացված՝ 63 և 46%-ը:

Գծապատկեր 22. Տարբեր ծառայությունների և ոլորտների կոռումպացվածության աստիճանը (%)



Հարցվածներին առաջարկվել է վարկանշել Հայաստանում առավել կոռումպացված ոլորտները կամ ծառայությունները: Յուրաքանչյուր հարցվող նշել է իր կարծիքով առաջին, երկրորդ և երրորդ ամենակոռումպացված ծառայությունները կամ ոլորտները: Համաձայն հարցման արդյունքների՝ ամենակոռումպացված ոլորտը առողջապահությունն է (39.7%): Երկրորդ տեղում կրկին առողջապահությունն է (17.6%), իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրել է ճանապարհային ոստիկանությունը (12.3%):



Թե պետական հատվածի որ մակարդակի (բարձրաստիճան, միջին օղակ և ցածրաստիճան) պաշտոնյաների շրջանում է կոռուպցիան ներկայումս առավել տարածված, հարցվածների 43%-ը նշել է միջին օղակի պաշտոնատար անձանց (վարչությունների/բաժինների պետեր), 26%-ի համար այն առավել հաճախ հանդիպում է քաղաքացիների հետ առօրյա շփումներ ունեցող ցածր օղակի պաշտոնատար անձանց շրջանում: Միաժամանակ հարցվածների մոտավորապես 16%-ը չի բացառել կոռուպցիայի տարածված լինելը նաև վերին օղակի պաշտոնատար անձանց շրջանում (գծապատկեր 23):

2010թ. հետազոտության արդյունքները վկայում են, որ հարցվածների 49%-ը կոռուպցիան տարածված է համարել վերին, 26%-ը՝ միջին և 6%-ը՝ ցածր օղակներում: Հետևաբար, երկու

հետազոտությունների արդյունքների համեմատականից կարելի է եզրակացնել, որ պետական կառավարման ուղղաձիգում կոռումպացվածության տեսանկյունից տեղի են ունեցել տեղաշարժեր: Եթե նախկինում առավել կոռումպացված են ընկալվել բարձրաստիճան պետական պաշտոնյաները, ապա ներկայումս նրանք իրենց դիրքերը զիջել են՝ ի տարբերություն միջին և ցածր օղակի պաշտոնատար անձանց, որոնց կոռումպացվածության մասին հանրային ընկալումներն ավելացել են:

Գծապատկեր 23. Կոռուպցիայի տարածվածությունն ըստ պաշտոնատար անձի դիրքի (%)



Ի պատասխան պետական պաշտոնյային ներկայումս կաշառք տալու առավել հաճախ հանդիպող դեպքերի մասին հարցին, հարցվածների 1/3-ից ավելին նշել է, որ նախապես հայտնի է, թե ով և ինչ/ինչպես պետք է գործի, դա չի քննարկվում, քանի որ դրվածքն այդպիսին է: Գրեթե նույնքան հարցված (30.7%) պատասխանել է, որ նախաձեռնողի դերում հանդես են գալիս քաղաքացիները: Հարցվածների 17%-ի համար կոռուպցիոն գործարքի դիմելու նախաձեռնությունը գալիս է պետական պաշտոնյաներից: «Չգիտեմ» տարբերակը նշել է հարցվածների 14.6%-ը (գծապատկեր 24):

Գծապատկեր 24. Ներկայումս պետական պաշտոնյայի հետ կոռուպցիոն գործարքներում թվարկված դեպքերից առավել հաճախ հանդիպողները (%)



2010թ. հետազոտության արդյունքների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն առավել հաճախ հանդիպող դեպքերն իրենց տեղն ունեցել են նաև 2019թ.: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ հարցվածների ընկալումներով ներկայումս դրանց նախաձեռնությունն ավելի շատ գալիս է քաղաքացիներից, քան պետական պաշտոնյաներից: Այսպես, եթե 2010թ. հարցվածների 21%-ը գտել է, որ նախաձեռնությունը գալիս է քաղաքացիներից, ապա 2019թ. նման կերպ մտածել են հարցվածների 30.7%-ը: Ինչ վերաբերում է պետական պաշտոնյայի նախաձեռնությանը, ապա դա որպես առավել հաճախ հանդիպող կոռուպցիոն դեպք 2019թ. նշել է հարցվածների 17.1%-ը, իսկ 2010թ.՝ հարցվածների 34%:

Հարցման արդյունքները վկայում են, որ 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո փոխվել են ինչպես կաշառքի չափի, այնպես էլ կաշառքի դեպքերի հաճախականության վերաբերյալ ընկալումները: Այսպես, հարցվածների 82.4%-ի կարծիքով կաշառքի չափը էականորոն կամ որոշ չափով նվազել է: Կաշառքի հաճախականության նվազման կարծիքին է եղել հարցվածների մոտ 91%-ը (գծապատկեր 25):

Գծապատկեր 25. Պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի չափի և դեպքերի հաճախականության փոփոխությունը (%)



Հարցվածների կարծիքով, 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո նվազել են նաև պետական պաշտոնյաների կողմից հովանավորչության և այլ կոռուպցիոն գործարքների դեպքերը: Հարցվածների կեսից ավելին նշել է, որ դրանք նվազել են որոշ չափով, իսկ 28%-ը նվազումը համարել է էական: Միաժամանակ հարցվածների 9.4%-ը համարել է, որ կոռուպցիոն գործարքները պետական պաշտոնյաների կողմից մնացել են նույն մակարդակի վրա, իսկ 8.6%-ն ընտրել է «չգիտեմ» պատասխանը (գծապատկեր 26):

Գծապատկեր 26. Պետական պաշտոնյաների կողմից հովանավորչության և այլ կոռուպցիոն գործարքների փոփոխությունը 2018թ. ապրիլ-մայիսից հետո (%)



Որպես կոռուպցիայի տարածմանը նպաստող գործոններ հարցվածների 16.8%-ը նշել է հանրության կողմից օրենքներին չհետևելը, դրան հաջորդել է օրենքների անկատարությունը (14.2%): Իրավակիրարկման թույլ պրակտիկան՝ ըստ հարցվածների, ևս խթանող ազդեցություն ունի կոռուպցիայի տարածման համար: Որպես տնտեսական գործոն հարցվածները նշել են տնտեսական ծանր վիճակը, աղքատությունը (12.3%): Որպես առանձին գործոններ առանձնացվել են պետական, համայնքային մարմինների ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը (10%), սոցիալ-տնտեսական անհավասարությունը (9.6%), հանրային վերահսկողության պակասը (7.6%) և այլն (գծապատկեր 27):

Գծապատկեր 27. Ներկայումս կոռուպցիայի տարածմանը նպաստող գործոնները (%)



2018թ. ապրիլ և մայիս ամիսներից առաջ և հետո կոռուպցիայի դրսևորման ձևերի համեմատականը վկայում է, որ հարցվածների ընկալումներով կոռուպցիայի առավել տարածված ձևերը ներկայումս նվազել են. մինչև երեք հնարավոր պատասխանի դեպքում ներկայի համար միջինում նշվել է 1,4 ձև, իսկ անցյալի համար՝ 2,3 ձև: Բոլոր պատասխանները անցյալի և ներկայի համար առանձին-առանձին մեկտեղելու դեպքում ստացվում է, որ ամենամեծ փոփոխությունը կրել է հովանավորչության պրակտիկան, որի տարածվածության բաժինը ներկայումս մոտ 22 տոկոսային կետով ավելի մեծ է, քան առաջ (գծապատկեր 28):

Գծապատկեր 28. Ներկայումս և երկու տարի առաջ կոռուպցիայի առավել տարածված ձևերը (%)



Հարկ է նշել, որ գնումների դեպքում «մաղարիչների» տարածվածության բաժինը ևս աճել է (3.5 տոկոսային կետ): Նախորդ ժամանակահատվածի համեմատ կրճատվել է կոռուպցիայի այլ դրսևորումների՝ օրինակ, բիզնեսի և քաղաքականության սերտաճման, ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսների չարաշահման, բյուջեից յուրացումների, սեփական և կլանային շահերին սպասարկող օրենքների ընդունման, բաժինը:

Հայաստանում կոռուպցիայի առկայությունը փաստողների (հարցվածների 87%) միայն 4.7%-ն է նշել, որ Հայաստանում բնավ հնարավոր չէ նվազեցնել կոռուպցիան: Նվազեցման հնարավորության մասին նշել է հարցվածների գերակշիռ մեծամասնությունը, այդ թվում՝ 36.8%-ը նշել է մասամբ, իսկ 43.8%-ը՝ էականորեն: Կոռուպցիան ամբողջովին վերացնելու հնարավորության մասին նշել է հարցվածների 12%-ը (գծապատկեր 29):

Գծապատկեր 29. Որքանո՞վ է հնարավոր նվազեցնել կոռուպցիան Հայաստանում (%)



2.3 Կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրները

Հարցվածները որպես կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրներ ավելի հաճախ նշել են ԶԼՄ-ները (36.9%) և ասեկոսեները (28.8%) (գծապատկեր 30):

Գծապատկեր 30. Կոռուպցիան գնահատելու տեղեկատվության աղբյուրները (%)



Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար հարցվածներին որպես առաջին կարևորության տեղեկատվական աղբյուր ծառայում է լրատվամիջոցների տրամադրած տեղեկատվությունը, ինչի մասին նշել է հարցվածների 36%-ը: Նրանք կարևորել են նաև ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից ստացված տեղեկատվությունը (26%), անձնական փորձը (19%): Սոցիալական ցանցերն ամենակարևոր են համարել հարցվածների 12%-ը: Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպությունների կողմից մատուցվող տեղեկատվությանը, ապա հարցվածների միայն 1-2 տոկոսն են դրանք ամենակարևոր համարել (գծապատկեր 31):

Գծապատկեր 31. Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ կարևորության (%)



Տեղեկատվության աղբյուրների դիտարկումը տարիքային խմբերի կտրվածքով վկայում է, որ անձնական փորձից, ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից, հասարակական կազմակերպություններից, լրատվամիջոցներից եկող տեղեկատվությունն ավելի էական է 23-30 տարեկանից մինչև 51-60 տարեկանն ընկած տարիքային խմբերի համար (աղյուսակ 14): Սակայն առկա են որոշակի շեշտադրումներ: Այսպես, 31-40 տարիքային խմբի ներկայացուցիչներն ավելի հաճախ նշել են սեփական փորձը (30%) և սոցիալական ցանցերը (28%), երիտասարդ սերնդի՝ 23-30 տարիքային խմբի ներկայացուցիչները, որպես տեղեկատվական աղբյուր կարևորել են հասարակական կազմակերպությունները (30%) և սոցիալական ցանցերը (25%):

Աղյուսակ 14. Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար տեղեկատվության աղբյուրները՝ ըստ տարիքային խմբերի (%)							
Տարիքային խումբը / Տեղեկատվության աղբյուրը	18-ից 22 (N=104)	23-ից 30 (N=263)	31-ից 40 (N=350)	41-ից 50 (N=207)	51-ից 60 (N=229)	61-ից 70 (N=210)	71 + (N=137)
Տեղեկություններ ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից	36	29	27	31	27	29	27
Լրատվամիջոցների տված տեղեկատվություն	28	31	34	32	40	46	56
Սոցիալական ցանցեր (ինտերնետ)	24	22	18	19	10	11	3
Անձնական փորձ	8	12	18	14	20	13	11
Հասարակական կազմակերպությունների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն (հանրային իրազեկում)	3	6	3	4	3	2	2

Հարկ է նշել, որ թե' ակտիվ, և թե' պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածների համար էական է լրատվամիջոցների կողմից մատուցվող տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկությունները ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից: Անձնական փորձը և հասարակական կազմակերպությունները որպես տեղեկատվության աղբյուր ընդգծված են ակտիվ դիրքորոշում ունեցողների մոտ (աղյուսակ 15):

Աղյուսակ 15. Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար տեղեկատվության աղբյուրները՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)				
	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Լրատվամիջոցների տված տեղեկատվություն	34.3	37	38.9	37.1
Տեղեկ. ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից	29.3	27.3	29.1	30.4
Անձնական փորձ	18.6	14.9	13.0	13.6
Սոցիալական ցանցեր	12.6	17	16.7	15.9
Հասարակական կազմակերպությունների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն	5.3	3.8	1.8	2.8
Այլ	0	0	0.5	0.2

Հարցման արդյունքներով պարզվել են ամենամեծ ժողովրդականություն վայելող լրատվամիջոցները: Այսպես, հարցվածների 25%-ից ավելին նշել է «Շանթ», մոտավորապես 20%-ը՝ «Արմենիա» և 15%-ը՝ Հ1 Հանրային հեռուստաընկերությունները:

«Շանթ» և «Արմենիա» հեռուստաընկերություններն ավելի շատ կանանց են գրավում, քան տղամարդկանց: Տղամարդկանց համար Հ1 Հանրային հեռուստաընկերությունը «Շանթ»-ից

հետո հանդիսանում է կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության երկրորդ աղբյուրը (16.9%): Նշված երեք հեռուստաընկերություններից բացի, տղամարդիկ ավելի հաճախ հետևում են news.am-ի (6.3%), իսկ կանայք՝ Azatutyun.am-ի (6.1%) հրապարակումներին (աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար տեղեկատվության աղբյուրները՝ ըստ սեռի (%)

	Արական (N=328)	Իգական (N=759)
«Շանթ» ՀԸ	23.6	26.7
«Արմենիա» ՀԸ	15.9	22.4
Հ1 Հանրային հեռուստաընկերություն	16.9	13.3
Այլ	9.6	9.5
News.am	6.3	3.8
Azatutyun.am	4.9	6.1
«Կենտրոն» ՀԸ	3.9	3.4
Ռուսական ՀԸ	2.6	1.3
«5-րդ ալիք» ՀԸ	2.5	1.4
Հ2 ՀԸ	2.2	1.8
«Երկիր Մեդիա» ՀԸ	2.1	1.2
Այլ	9.6	9.0

Հարկ է նշել, որ հարցվածների սոցիալական բարեկեցության մակարդակն ազդում է տեղեկատվության աղբյուրի ընտրության վրա: Այսպես, սոցիալապես պակաս ապահովները նախընտրել են «Շանթ» հեռուստաընկերությանը: Հարցվածների սոցիալական բարեկեցության աճին զուգընթաց նշված հեռուստաընկերության լսարանը նվազում է: Նվազման միտումներ են առկա նաև «Արմենիա» հեռուստաընկերության դեպքում: Հ1-ի պարագայում պատկերը էապես փոխվում է. հարցվածների սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացման հետ մեկտեղ դրա լսարանն աճում է (աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար տեղեկատվության աղբյուրներն՝ ըստ սոցիալական վիճակի (%)

	Բավարար գումար չունեն նույնիսկ սննդի համար (N=195)	Բավարար գումար ունեն սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է (N=354)	Բավարար գումար ունեն սննդի և հագուստի համար, կարողանում են խնայել որոշ գումար, բայց չեն կարող թանկարժեք իրեր (N=438)	Կարող են գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց (N=33)	Կարող են գնել այն ամենը, ինչ ցանկանում են, ներառյալ բնակարան կամ ամառանոց (N=6)
«Շանթ» ՀԸ	62.6	54.9	39.8	29.8	0.0
«Արմենիա» ՀԸ	47.0	38.3	36.5	17.7	31.6
Հ1 Հանրային ՀԸ	18.7	27.9	25.5	29.7	45.5
Azatutyun.am	5.6	10.4	11.9	22.6	10.7
News.am	3.1	8.0	10.5	13.8	24.8
«5-րդ ալիք» ՀԸ	1.8	3.6	2.8	0.0	10.9
«Կենտրոն» ՀԸ	7.2	3.6	3.6	0.0	0.0
Հ2 ՀԸ	3.8	2.7	3.5	0.7	0.0
Tert.am	0.3	1.9	1.3	0.0	0.0
Ռուսական ՀԸ	1.8	1.6	1.7	1.6	0.0

«Երկիր Մեդիա» ՀԸ	2.7	1.6	2.3	0.0	0.0
Այլ	21.0	20.5	33.4	60.3	32.9

Հարցվածները կանոնավոր հետևում են իրենց նախընտրած ԶԼՄ-ին, քանի որ նրանց 70%-ը վկայել է, որ իր կողմից նշված ԶԼՄ-ից օգտվել է նախորդ օրը, իսկ 26%-ը՝ վերջին մեկ շաբաթվա ընթացքում:

Հարցվածներին առաջարկվել է նշել այն լրատվական աղբյուրը, որին վստահում են, և որի կողմից մատուցվող տեղեկատվությունը կամ նորությունները կարելի է որակել որպես հավաստի ու արժանահավատ: Հարցվածների 30%-ից ավելին տեղեկատվության հավաստիության առումով վստահել է «Շանթ» հեռուստաընկերությանը: Դրան հաջորդել է «Արմենիա»-ն (18.3%), և որպես նորությունների հավաստի աղբյուր երրորդ տեղը զբաղեցրել է ամենաընդարձակ հեռուստալսարան ունեցող Հ1 Հանրային հեռուստաընկերությունը (13.8%):

2008թ.-ի հետազոտության արդյունքների[3] հետ համեմատականը վկայում է, որ «Շանթ» հեռուստաընկերությունը շարունակում է վայելել հեռուստալսարանի վստահությունը: Որպես վստահելի տեղեկատվական աղբյուր իր դիրքերը բարելավել է «Արմենիա» հեռուստաընկերությունը. եթե 2008թ. նրան որպես ամենավստահելի տեղեկատվական աղբյուր ճանաչել է հարցվածների 9%-ը, ապա 2019թ.՝ 18.3%-ը: Իր դիրքերն էապես զիջել է Հ1 հանրային հեռուստաընկերությունը. 2008թ. 25%-ի փոխարեն ներկայումս այն վստահելի է համարել հարցվածների 13.8%-ը:

Բոլոր տարիքային խմբերում «Շանթ»-ին վստահողների բաժինը բարձր է և աճող՝ հարցվածների տարիքի աճին զուգընթաց: «Արմենիա» հեռուստաընկերության հեռուստալսարանում բարձր է 23-30 (22.6%), 31-40 (23.6%) տարիքային խմբերի տեսակարար կշիռը, իսկ Հ1-ը նախընտրել են 51 տարեկանից բարձրերը (աղյուսակ 18):

Աղյուսակ 18. ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունը՝ ըստ տարիքային խմբերի (%)

	18-22 տ. (N=86)	23-30 տ. (N=240)	31-40 տ. (N=325)	41-50 տ. (N=204)	51-60 տ. (N=237)	61-70 տ. (N=240)	71 + տ. (N=168)
«Շանթ» ՀԸ	26.9	19.0	19.8	29.1	37.6	36.3	50.8
«Արմենիա» ՀԸ	10.4	22.6	23.6	16.4	13.5	16.7	17.3
Հ1 ՀԸ	5.1	15.0	13.8	7.9	15.8	15.9	17.9
Azatutyun.am	16.3	10.1	11.9	10.6	7.6	4.1	1.7
«Ազատություն» Ռ/Կ	1.6	7.4	2.8	3.2	1.4	1.7	0.6
Ռուսական ՀԸ	0.0	5.2	0.0	1.0	4.1	2.5	0.9
News.am	2.9	4.5	6.2	2.6	2.9	0.0	1.3
Հ2 ՀԸ	1.0	2.3	0.0	0.4	0.0	3.5	0.0
«Կենտրոն» ՀԸ	0.0	1.6	2.1	1.0	4.9	0.6	1.2
Shamshyan.com	2.1	1.1	0.0	0.7	0.0	0.0	0.0
«5-րդ ալիք» ՀԸ	0.0	0.9	1.3	1.8	0.5	2.9	0.0
Civilnet.am	0.0	0.8	0.0	0.8	0.0	0.0	0.0
Հայկական ժամանակ	0.0	0.8	0.0	0.0	0.0	0.0	0.0
A-TV	0.0	0.4	0.0	1.0	2.7	0.0	0.5
«Երկիր Մեդիա» ՀԸ	0.3	0.0	0.0	2.7	0.0	3.0	0.0
Այլ	33.3	8.4	18.4	20.9	9.0	12.9	7.8

[3] 2008թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի այս հետազոտությամբ www.crrc.am ուսումնասիրվել է ԶԼՄ-ների վստահության վարկանիշը:

«Շանթ» և «Արմենիա» հեռուստաընկերություններին ավելի շատ վստահում են գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար՝ 28.3 և 26.1%), իսկ Հ1-ին՝ Երևանում (16.4%): Երևանի և այլ քաղաքների բնակիչների վստահությունը վայելող այլ ԶԼՄ-ներն են Azatutyun.am (համապատասխանաբար՝ 8.4% և 6.8%) և News.am (համապատասխանաբար՝ 6.5% և 5.5%) համացանցային էջերը: Գյուղաբնակները վստահում են «Կենտրոն» հեռուստաընկերությանը (4.4%) (աղյուսակ 19):

Աղյուսակ 19. ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունը՝ ըստ բնակավայրի (%)

	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր
«Շանթ» ՀԸ	23.0	24.5	28.3
«Արմենիա» ՀԸ	15.1	16.8	26.1
Հ1 Հանրային ՀԸ	16.4	14.1	13.9
Azatutyun.am	8.4	6.8	2.2
News.am	6.5	5.5	2.8
«Կենտրոն» ՀԸ	2.6	3.6	4.4
Հ2 ՀԸ	1.4	2.4	2.1
«5-րդ ալիք» ՀԸ	2.6	1.5	1.6
Ռուսական ՀԸ	2.1	2.2	1.3
A-TV	2.0	0.3	2.8
«Ազատություն» ռադիոկայան	1.2	3.0	1.1
«Երկիր Մեդիա» ՀԸ	0.9	2.1	1.8
Այլ	17.7	17.2	11.8

ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Անհատական վարքագիծը կոռուպցիոն իրավիճակներում

Կոռուպցիայի նկատմամբ հարցվողի անհատական վարքագիծը գնահատելու նպատակով՝ նրան առաջարկվել է պատկերացնել երկու իրավիճակ. 1) նա գտնվում է կոռուպցիայի պահանջարկի կողմում և 2) նա գտնվում է կոռուպցիայի առաջարկի կողմում:

Այսպես, առաջին իրավիճակում հարցվողը պաշտոն է զբաղեցնում և հայտնվում է կոռուպցիոն ռիսկի գոտում, քանի որ նրան կաշառք է առաջարկվում: Ո՞րն է լինելու նրա պատասխանը: Հարցվածների 76%-ը պատասխանել է միանշանակ՝ կաշառք չի վերցնի: 7.9%-ը ավելի առաջ է գնացել՝ նշելով, որ ոչ միայն կաշառք չի վերցնի, այլ նաև այդ մասին կազդարարի: Կաշառք վերցնելու տարբերակը չի բացառել 6.9%-ը, սակայն որպես որոշիչ գործոններ նշել է իրավիճակը և կաշառքի չափը: Առանց պայմանի կաշառք վերցնելու հակվածությունն առկա է հարցվածների 4.4%-ի մոտ: «Չգիտեմ» պատասխանն ընտրել է հարցվածների 3.8%-ը: Ի դեպ, հարցվածների մի փոքր մասն էլ (0.4%) նշել է, որ կաշառք կվերցնի, սակայն այդ մասին կազդադարի համապատասխան կառույցին (գծապատկեր 32):

Գծապատկեր 32. Ինչպե՞ս կվարվեք եթե Ձեզ կաշառք առաջարկեն (%)



Այնուհետև ուսումնասիրվել են կաշառք վերցնելու և չվերցնելու դրդապատճառները: Հարցվածների 31.6%-ը կաշառք վերցնելու իր վարքագիծը բացատրել է բոլորից չտարբերվելու ձգտումով, քանի որ ըստ նրանց՝ բոլորն էլ վերցնում են, իսկ 24.5%-ը որպես դրդապատճառ նշել է լավ ապրելու ձգտումը: Հարցվածների 15.3%-ը պատճառաբանել է, որ ծառայությունը մատուցելուց հետո շնորհակալություն հայտնելը չի համարվում կաշառք: Հարցվածների 14.7%-ը կոռուպցիոն գործարքի կարող է գնալ կարիքից դրդված:

Հետաքրքիր են նաև կաշառք չվերցնելու շարժառիթները: Հարցվածների գերակշիռ մեծամասնության մոտ այդ շարժառիթները բարոյական բնույթ ունեն: Այսպես, 62%-ից ավելին

նշել է, որ ինքը կաշառք չի վերցնի, քանի որ դա իր համար բարոյապես ընդունելի չէ: Հարցվածների շուրջ 28%-ի համար զսպող դերակատարում ունեն իրավական հետևանքները: Նրանց 20.1%-ը նշել է, որ կաշառք չի վերցնի, քանի որ դա հանցագործություն է, իսկ 7.6%-ը մատնանշել է պատժվելու բարձր ռիսկը: Ավելի քան 9%-ը գտել է, որ կոռուպցիայից հրաժարվելը կնպաստի դրա վերացմանը:

Հակառակ իրավիճակում, երբ հարցվողը հայտնվում է կաշառք առաջարկողի դերում, հակակոռուպցիոն դիրքորոշում դրսևորվել է հարցվածների ավելի քան 2/3-ը: Նման դիրքորոշում ունեցողների 63.8%-ը պատասխանել է, որ կաշառք չի տա, իսկ 7.4%-ը ոչ միայն չի տա, այլ նաև այդ մասին կազդարարի համապատասխան կառույցին: Կաշառք տալուն հակվածների ընդհանուր բաժինը կազմում է մոտավորապես 24%: Ի դեպ՝ այս խմբի միայն 6.8%-ն է հաստատակամ կաշառք տալու հարցում, իսկ 17%-ը դիտարկում է դրա հնարավորությունը՝ կախված իրավիճակից, ինչպես նաև պահանջվող գումարի չափից: Հարցին պատասխան չի ունեցել հարցվածների 3.7%-ը (գծապատկեր 33):

Գծապատկեր 33. Եթե Ձեզնից կաշառք պահանջվի, կտա՞ք (%)



Հարցվածների գրեթե 60%-ը կաշառք տալը բացատրել է համապատասխան ծառայությունը ստանալու այլ տարբերակի բացակայությամբ: Գործընթացն արագացնելու և պատշաճ որակի ծառայություն ստանալու դրդապատճառները նշել են հարցվածների համապատասխանաբար 20-ական տոկոսը:

Կաշառք չտվողների համար դրանից զերծ մնալու հիմնական պատճառը կաշառքի անընդունելի լինելն է: Նման կերպ են պատասխանել հարցվածների 80.9%-ը: Կաշառք չտալը հարցվածների 9.3%-ը բացատրել է ֆինանսական հնարավորության բացակայությամբ, իսկ 6.6%-ի համար զսպող նշանակություն ունի պատժվելու ռիսկը:

Հետաքրքիր է, որ ավելի մեծ թվով հարցվածներ հակված են եղել հրաժարվել կաշառք վերցնելուց (76%), քան տալուց (63.8%):

Հիմնվելով կաշառք վերցնելու և տալու առաջարկի նկատմամբ հարցվածների հնարավոր արձագանքի վրա՝ նրանց վարքագիծը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- **կոռուպցիոն ներուժ**. անձինք, որ պատրաստ են թե՛ կաշառք վերցնելուն, թե՛ տալուն,
- **կոռուպցիան սատարողներ**. անձինք, որ մի կողմից պատրաստ են կաշառք տալ, սակայն չվերցնել, իսկ մյուս կողմից պատրաստ են կաշառք վերցնել, սակայն չտալ,
- **հակակոռուպցիոն ներուժ**. անձինք, որ և՛ կաշառք չեն տա, և՛ չեն վերցնի:

Վերջին ինը տարիների ընթացքում այն անձանց բաժինը, ովքեր կաշառք կվերցնեին, սակայն չէին տա, նվազել է 1%-ով, իսկ նրանցը, ովքեր կաշառք չէին վերցնի, սակայն կտային, նվազել է ավելի քան 2.5 անգամ՝ կազմելով 15%: Դիտարկվող ժամանակահատվածի համար ավելի քան երկու անգամ կրճատվել է կոռուպցիոն ներուժը, իսկ հակակոռուպցիոն ներուժը ավելացել է գրեթե երկու անգամ: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանում առկա է կոռուպցիայի հանրային մերժման զգալի ներուժ, և որ ձևավորվում է կոռուպցիայի անընդունելիությունը գիտակցող քաղաքացիական կամք:

Հարցվածների վերաբերմունքը կաշառք տալու և վերցնելու նկատմամբ 2010թ.		
	Ես կաշառք կտայի	Ես կաշառք չէի տա
Ես կաշառք կվերցնեի	19% Կոռուպցիոն ներուժ	4% Կոռուպցիան սատարողներ
Ես կաշառք չէի վերցնի	41% Կոռուպցիան սատարողներ	**36%** **Հակակոռուպցիոն ներուժ**
Հարցվածների վերաբերմունքը կաշառք տալու և վերցնելու նկատմամբ 2019թ.		
	Ես կաշառք կտայի	Ես կաշառք չէի տա
Ես կաշառք կվերցնեի	9% Կոռուպցիոն ներուժ	3% Կոռուպցիան սատարողներ
Ես կաշառք չէի վերցնի	15% Կոռուպցիան սատարողներ	**73%** **Հակակոռուպցիոն ներուժ**

Հակակոռուպցիոն ներուժը գրեթե նույնական է թե՛ ըստ հարցվածների բնակավայրի տիպի, թե՛ ըստ կրթամակարդակի, և թե՛ ըստ սեռի: Տարիքային խմբերով դիտարկելիս այն համեմատաբար ցածր է ներկայանում միջին տարիքի մարդկանց շրջանում (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Հակակոռուպցիոն ներուժի բնութագիրը՝ ըստ տարիքային խմբերի (%)	
18-ից 22 տարեկան (N=86)	75
23-ից 30 տարեկան (N=240)	71
31-ից 40 տարեկան (N=325)	71
41-ից 50 տարեկան (N=204)	63
51-ից 60 տարեկան (N=237)	68
61-ից 70 տարեկան (N=240)	79
71 տարեկան և ավելի (N=168)	81

3.2. Անհատական փորձառությունը կոռուպցիոն իրավիճակներում

Վերջին 12 ամիսների ընթացքում հարցվածներն ավելի հաճախ շփվել են առողջապահական հաստատությունների (72.7%), կոմունալ ծառայություն մատուցողների (73.2%), հեռահաղորդակցության օպերատորների (59.4%), կրթական հաստատությունների (47%), համայնքային (45.2%) և սոցիալական ապահովության ծառայություններ մատուցողների (35.7%) հետ:

Առողջապահական հաստատություններ դիմածների միայն 7.6%-ն է հավելյալ վճար տվել (նրանց ամենաստվար հատվածը՝ 37%-ը, մատնանշել է 10-30 հազար դրամի միջակայքը): Հետաքրքրական է այն փաստը, որ չնայած նոտարական գրասենյակների, ճանապարհային ոստիկանության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ներկայումս՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն), անշարժ գույքի կադաստրի հետ հարցվածների առնչությունը համեմատաբար սակավ է եղել, դրանք գտնվում են ավելի շատ հավելյալ վճարներ ստացած հաստատությունների ցուցակում: Այսպես, դրանց հետ առնչվածների 3-6% վճարել է հավելյալ վճարներ (գծապատկեր 34):

Գծապատկեր 34. Վճարված հավելյալ վճարները (%)



2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո պետական պաշտոնյաների հետ հարաբերվելիս հարցվածների 87-98%-ը կոռուպցիոն երևույթների առհասարակ չի բախվել: Համեմատական առումով առավել հաճախ դիտարկվող կոռուպցիոն երևույթն է խնամի-ծանոթ-բարեկամի (ԽԾԲ)

միջոցով կամ գումարի դիմաց պաշտոնյայի կողմից նշանակումների իրականացումը (գծապատկեր 35):

Գծապատկեր 35. 2018թ. ապրիլ-մայիսից հետո պաշտոնատար անձանց հետ առնչվելիս որքա՞ն հաճախ եք հանդիպել հետևյալ երևույթներին (%)



ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Հակակոռուպցիոն անհատական վարքագծի ընկալումները

Հարցին, թե անձամբ ինչ կանեիք, կոռուպցիայի մակարդակը Հայաստանում նվազեցնելու համար, հարցվածների պատասխանները եղել են բավականին հուսադրող: Այսպես, հարցվածների 37.6%-ը կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու միջոց է համարել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց խուսափելը: Հարցվածների 12.1%-ը որպես պայքարի նվազեցման միջոց նշել է պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց հրաժարվելը: Հարցվածները հակակոռուպցիոն գործողություններ են համարել նաև ազդարարումը, հակակոռուպցիոն գիտելիքի և վարքագծի տարածումը, ազնիվ կուսակցությունների և պատգամավորների ընտրելը: Հարցվածների գրեթե 15%-ը նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարում ոչինչ չի կարող անել (գծապատկեր 36):

Գծապատկեր 36. Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններ (%)



2010թ. հետազոտության արդյունքների հետ համեմատականը ցույց է տալիս, որ կաշառք տալուց խուսափողների տեսակարար կշիռն ավելացել է՝ 2010թ.-ի 23%-ի փոխարեն 2019թ.-ին կազմելով 37.6%: Բացի այդ, ավելի քան 3.5 անգամ նվազել է «ոչինչ չեմ կարող անել» պատասխանների տեսակարար կշիռը՝ 2010թ.-ի 53%-ի փոխարեն 2019թ.-ին կազմելով 14.6%: Ի դեպ՝ 2008-2010թթ.

իրականացված հետազոտությունների արդյունքներում պատասխանի վերջին տարբերակն ընտրածների թիվը տարեցտարի աճել է (2008թ.՝ 42%, 2009թ.՝ 48%, 2010թ.՝ 53%):

Ինչ վերաբերում է քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերի նկատմամբ ակտիվ և պասիվ դիրքորոշում ունեցողներին, ապա պասիվ դիրքորոշում ունեցողների համեմատաբար ավելի մեծ տոկոսն է ընտրել կաշառք տալուց խուսափելու տարբերակը. այսպես, այդ տարբերակն ընտրել է քաղաքականությամբ բոլորովին չհետաքրքրվածների 44.5%-ը, քիչ հետաքրքրվածների՝ 38.9%-ը, մինչդեռ քաղաքականությամբ շատ և որոշ չափով հետաքրքրվածների՝ 34.5-ական տոկոսը (աղյուսակ 21):

Աղյուսակ 21. Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններ՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Շատ եմ հետաքրքր. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետաքրք. (N=362)	Բոլորովին հետաքրքր. չեմ (N=331)
Խուսափել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց	34.5	34.6	38.9	44.5
Հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց	11.3	12.1	12.9	12.1
Ոչինչ չեմ կարող անել	10.9	15.3	15	16.2
Խոսել ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին	9.1	8.6	6.8	4.6
Ընտրել ազնիվ կուսակցությունների կամ պատգամավորների	8.4	7.8	5.3	5.6
Հայտնել (ազդարարել) պատկան մարմիններին	7.5	5.5	5.8	6
Հայտնել պետական մարմինների թեժ գծերի միջոցով	6.2	6.3	8	4.9
Մասնակցել և աջակցել հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին	4.4	4.1	2.8	2.8
Բոյկոտել կոռումպացված բիզնեսը	3.4	3.1	1.8	1.1
Մասնակցել ստորագրահավաքների/միջոցառումների/ցույցերի	1.5	1.3	1.8	0.8
Հայտնել հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին	1.1	0.8	0.6	0.6
Այլ	1.9	0.6	0.3	0.8

Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններում էական տարբերություններ չեն դիտարկվում կանանց և տղամարդկանց սպասվելիք վարքագծում: Որոշ առումով տղամարդիկ ավելի հակված են խուսափել կաշառք տալուց (40%), քան կանայք (36.2%), իսկ վերջիններս էլ ավելի պատրաստակամ են մասնակցելու և աջակցելու հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին (4.3%), քան տղամարդիկ (2.7%):

Ինչ վերաբերում է հարցվածների հակակոռուպցիոն ակտիվությանն ըստ բնակավայրերի, ապա որպես հնարավոր հակակոռուպցիան գործողություն կաշառք տալուց խուսափելը նշել են գյուղաբնակների 42.6%-ը, Հայաստանի այլ քաղաքների բնակիչների 41.3%-ը և երևանցիների ընդամենը 29.6%-ը: Հարկ է նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարում սեփական ուժերի նկատմամբ ավելի վստահ են այլ քաղաքների բնակիչները: Նրանց միայն 9.9%-ն է ընտրել «ոչինչ չեմ կարող անել» տարբերակը՝ ի տարբերություն երևանցիների (15.2%) և հատկապես՝ գյուղաբնակների (18.7%) (գծապատկեր 37):

Գծապատկեր 37. Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններ՝ ըստ բնակավայրի տիպի (%)



Հարկ է նշել, որ կրթամակարդակի բարձրացմանը զուգընթաց հարցվածների մոտ սեփական ուժերի նկատմամբ վստահությունն աճում է: Այսպես, եթե ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների 16.9%-ն է ընտրել «ոչինչ չեմ կարող անել» տարբերակը, ապա միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեցողների՝ 13.3%-ը, իսկ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների՝ 12.2%: Բացի այդ, կրթամակարդակի բարձրացման հետ մեկտեղ աճում է հայտնելու (ազդարարելու) օգտին իրենց ձայնը տվող հարցվածների տեսակարար կշիռը (աղյուսակ 22):

Աղյուսակ 22. Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններ՝ ըստ կրթամակարդակի (%)

	Ոչ լրիվ միջնակարգ և լրիվ միջնակարգ (N=706)	Միջին մասն. և թերի բարձրագույն (N=381)	Բարձրագույն և հետբուհ. (N=413)
Խուսափել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց	39.4	37.2	35.2
Ոչինչ չեմ կարող անել	16.9	13.3	12.2
Հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց	13.0	11.6	11.3
Խոսել ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին	6.3	7.8	8.9
Հայտնել (ազդարարել) պատկան մարմիններին	5.8	5.0	7.3

Հայտնել պետական մարմինների թեժ գծերի միջոցով	5.6	7.1	7.2
Ընտրել ազնիվ կուսակցությունների կամ պատգամավորների	5.5	10.1	5.9
Մասնակցել և աջակցել հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին	2.5	2.8	5.9
Բոյկոտել կոռումպացված բիզնեսը	2.3	2.8	2.4
Մասնակցել ստորագրահավաքների/միջոցառումների/ ցույցերի	1.2	1.1	1.8
Հայտնել հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին	0.7	0.6	1.0
Այլ	0.8	0.6	0.9

Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններն ըստ տարիքային խմբերի դիտարկելիս պարզվում է, որ մինչև 50 տարեկանների համար պայքարի հիմնական միջոցը կաշառք տալուց խուսափելն է: 51 տարեկանից հետո «ոչինչ չեմ արել» տարբերակն ընտրածների բաժինն աճում է: Ի դեպ՝ կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ առավել ակտիվ դիրքորոշում գրանցվել է 18-22 և 31-40 տարեկանների խմբերում, որոնք «ոչինչ չեմ արել» տարբերակը ավելի քիչ են նշել՝ համապատասխանաբար 26.4%-ը և 30%-ը (աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Կոռուպցիայի նվազեցմանը միտված գործողություններ՝ ըստ տարիքային խմբերի (%)

	18-22 տ. (N=89)	23-30 տ. (N=198)	31-40 տ. (N=274)	41-50 տ. (N=184)	51-60 տ. (N=231)	61-70 տ. (N=277)	71 +տ. (N=247)
Խուսափել եմ կաշառք տալուց	39.8	40.5	40.5	40.9	32.3	35.4	37.0
Ոչինչ չեմ արել	26.4	38.7	30.0	34.5	40.9	39.3	37.2
Խոսել եմ ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին	10.6	4.8	8.3	6.5	9.4	8.2	6.3
Ընտրել եմ արդար կուսակցություններին կամ պատգամավորներին	4.4	3.8	7.2	4.7	5.6	5.5	5.1
Հրաժարվել եմ պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անել	11.4	5.6	6.2	10.1	6.1	7.6	11.0
Բոյկոտել եմ կոռումպացված բիզնեսը	1.0	1.4	2.0	0.7	1.7	1.2	0.3
Մասնակցել եմ ստորագրահավաքների/միջոցառում ների/ցույցերի	1.5	0.7	1.5	0.9	0.9	0.0	0.8
Մասնակցել և աջակցել եմ հակակոռուպցիոն կրթական արշավներին	0.6	3.5	1.5	0.4	0.6	0.9	0.0
Հայտնել (ազդարարել) եմ պատկան մարմիններին	2.0	0.8	0.8	0.6	1.1	0.5	0.6
Հայտնել եմ պետական մարմինների թեժ գծերի միջոցով	1.6	0.2	0.5	0.0	1.3	1.0	0.8
Ազդարարել եմ հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին	0.6	0.0	0.0	0.3	0.0	0.0	0.0
Այլ	0.0	0.0	1.4	0.3	0.2	0.3	0.8

Հարցին, թե նախորդ ժամանակահատվածում թվարկված գործողություններից որոնք են գործնականում կիրառվել հարցվածների կողմից, նրանց 38.2%-ը պատասխանել է, որ խուսափել

է կաշառք տալուց: Ոչինչ չի ձեռնարկել հարցվածների ավելի քան 35%-ը: Կոռուպցիայի անընդունելի լինելու մասին ազգականների և ընկերների հետ խոսել է 7.7%-ը: Գրեթե նույնքան հարցվածներ (7.6%) նախկինում հրաժարվել են պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց, իսկ 5.4%-ը ընտրել է ազնիվ կուսակցությունների կամ պատգամավորների: Բավականաչափ ցածր է կոռումպացված բիզնեսին բոյկոտելու (1.3%), հակակոռուպցիոն կրթական արշավներին (1.3%) և ստորագրահավաքներին մասնակցելու (0.9%), ինչպես նաև ազդարարելու փորձառությունը (0.8%) (գծապատկեր 38):

Գծապատկեր 38. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցությունն անցյալում (%)



Ինչպես երևում է 24-րդ աղյուսակի տվյալներից, և' ակտիվ, և' պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածների շրջանում ևս ամենատարածված հակակոռուպցիոն գործողությունը կաշառք տալուց խուսափելն է: Դրա հետ մեկտեղ քաղաքականությամբ շատ հետաքրքրվածների մոտ 9%-ը որպես հակակոռուպցիոն պայքարի տարբերակ կիրառել է ընտրություններին արդար մասնակցելը կամ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին զրույցները բարեկամների ու հարազատների շրջանում, ապա բոլորովին չհետաքրքրվածների ընդամենը 4.6 և 4.2%-ն են օգտվել այդ տարբերակներից:

Աղյուսակ 24. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցությունն անցյալում՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)				
	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Խուսափել եմ կաշառք տալուց	39.1	35.3	41.5	38.7
Ոչինչ չեմ արել	25.9	35.6	36.8	42
Խոսել եմ ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին	9.5	8.9	7.5	4.2
Ընտրել եմ արդար կուսակցություններին կամ պատգամավորներին	9.1	5	3.8	4.6
Հրաժարվել եմ պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անել	7.5	8.4	7.1	7.1
Մասնակցել և աջակցել եմ հակակոռուպցիոն կրթական արշավներին	2.2	1.6	0.6	0.5
Բոյկոտել եմ կոռումպացված բիզնեսը	2	1.8	0.9	0.5
Հայտնել (ազդարարել) եմ պատկան մարմիններին	1.3	1.4	0.2	0.2
Հայտնել եմ պետական մարմինների թեժ գծերի միջոցով	1.2	0.9	0.5	0
Մասնակցել եմ ստորագրահավաքների/միջոցառումների/ցույցերի	1.2	0.9	0.9	0.7
Ազդարարել եմ հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին	0.5	0	0	0
Այլ	0.6	0.2	0.1	1.5

Գործնականում հակակառուպցիոն որոշակի ակտիվություն գրանցվել է բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների մոտ: Այս խմբի ներկայացուցիչները՝ ի տարբերություն ոչ լրիվ և լրիվ միջնակարգ ու միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեցողների, աջակցել և մասնակցել են հակակոռուպցիոն կրթական արշավներին (3.6%), բոյկոտել կոռումպացված բիզնեսին (2.1%) (աղյուսակ 25):

Աղյուսակ 25. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցությունն անցյալում՝ ըստ հարցվածների կրթամակարդակի (%)			
	Ոչ լրիվ և լրիվ միջնակարգ (N=645)	Միջին մասն. և թերի բարձ. (N=406)	Բարձրագույն և հետբուհական (N=402)
Խուսափել եմ կաշառք տալուց	36.7	37.4	41.7
Ոչինչ չեմ արել	41.2	32.6	28.1
Խոսել եմ ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին	7.0	9.3	7.3
Հրաժարվել եմ պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անել	7.1	7.9	8.3
Ընտրել եմ արդար կուսակցություններին կամ պատգամավորներին	4.5	7.7	4.9
Բոյկոտել եմ կոռումպացված բիզնեսը	0.8	1.4	2.1
Մասնակցել և աջակցել եմ հակակոռուպցիոն կրթական արշավներին	0.5	0.2	3.6
Մասնակցել եմ ստորագրահավաքների/միջոցառումների/ցույցերի	0.9	1.4	0.6
Հայտնել (ազդարարել) եմ պատկան մարմիններին	0.7	0.4	1.6

Հայտնել եմ պետական մարմինների թեժ գծերի միջոցով	0.5	1.3	0.3
Ազդարարել եմ հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին	0.1	0.2	0.0
Այլ	0.0	0.4	1.5

4.2 Հակակոռուպցիոն հնարավոր անհատական գործողությունները

Հարցին, թե ում կդիմեիք պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար, հարցվածների 42%-ը ընտրել է ոչ մի հաստատության չդիմելու տարբերակը: Կոռուպցիոն դեպքի կամ վարքագծի մասին տեղեկացնելու համար հարցվածներն ավելի հակված են դիմելու ոստիկանությանը (19.3%), ՀՀ Վարչապետին (10.9%) և Մարդու իրավունքների պաշտպանին (մոտ 5%): Մնացած հաստատությունների մասին նշումները 5%-ից պակաս են: Հարկ է նշել, որ www.azdararir.am անանուն ազդարարման հարթակին դիմելու ցանկություն է հայտնել հարցվածների շատ փոքր մասը (0.2%) (գծապատկեր 39):

Գծապատկեր 39. Ո՞ր հաստատությանը կդիմեիք՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար (%)



26-րդ աղյուսակից կարելի է եզրակացնել, որ կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու ակտիվությունը հարցվածների կրթամակարդակով պայմանավորված ավելանում է: Այսպես, եթե ոչ լրիվ միջնակարգ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների 45.6%-ն է ընտրել ոչ մի հաստատություն չդիմելու տարբերակը, ապա բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների՝ 35.7%-ը: Ոստիկանությանը դիմելուն ևս ավելի հակված են ավելի բարձր

կրթամակարդակ ունեցողները: Մինչդեռ, կոռուպցիոն վարքագծի մասին ՀՀ վարչապետին տեղեկացնելը նվազում է կրթամակարդակի աճին զուգընթաց:

Աղյուսակ 26. Ո՞ր հաստատությանը կդիմեիք՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար (%)

	Ոչ լրիվ և լրիվ միջնակարգ (N=709)	Միջին մասն. և թերի բարձրագույն (N=374)	Բարձրագույն և հետբուհակ. (N=417)
Ոչ մի հաստատության չէի դիմի	45.6	42.8	35.7
Ոստիկանությանը	17.8	20.4	20.7
ՀՀ Վարչապետին	13.0	12.8	5.9
Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին	3.1	5.8	7.0
Ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի ղեկավարին	3.1	2.3	6.7
Տվյալ պաշտոնյայի վերադասին	4.0	3.3	2.9
Դատարանին	2.0	1.6	5.3
Դատախազությանը	1.9	1.6	2.6
Կոռուպցիոն դեպքեր լուսաբանող ԶԼՄ-ներին	1.6	0.9	3.1
Թեժ գիծ	1.3	2.1	1.8
Ազգային Անվտանգության Ծառայությանը (ԱԱԾ)	0.7	1.1	2.0
Այլ	5.8	5.3	6.2

Կոռուպցիոն գործողության մասին չհայտնելու հիմնական պատճառը հասարակության քննադատության արժանանալն է, քանի որ կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելը կամ ազդարարելը հայ հասարակության կողմից՝ ըստ հարցվածների 74.5%-ի, պախարակելի է: Չհայտնելու այլ պատճառների թվում նշվել են պատժվելու կամ ճնշումների ենթարկվելու վախը (58.3%), հայտնելու գործընթացներին ծանոթ չլինելը (52.4%), հայտնելու գործընթացը դժվար և ժամանակատար համարելը (48.2%): Պատասխաններում նկատելի է որոշակի հիասթափություն առ այն, որ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի (43.8%): Հարցվածների 42.4%-ի մոտեցումը եսամոլական երանգ ունի. ըստ նրանց՝ չարժե հայտնել կոռուպցիայի մասին, երբ այն անձամբ քեզ չի վնասում, իսկ 33.1%-ն էլ կոռուպցիոն դեպքերին ըմբռնումով է վերաբերում, քանի որ այդ քայլին դիմում են կարիքից դրդված (գծապատկեր 40):

Գծապատկեր 40. Որո՞նք են կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու պատճառները (%)



Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (98.4%) վերջին 12 ամիսների ընթացքում չի հայտնել որևէ պաշտոնյայի կողմից կոռուպցիոն երևույթի դրսևորման մասին:

Ինչ վերաբերում է կոռուպցիոն երևույթի մասին հայտնելու դեպքերին, ապա 26.2%-ը դիմումներն ուղղել է ՀՀ վարչապետին, 17.3%-ը՝ ոստիկանությանը, 9.6%-ը՝ ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի ղեկավարին, 7.2%-ը՝ դատախազությանը, 5%-ը՝ տարածքի պատգամավորին (գծապատկեր 41):

[4] Գծապատկերում ներկայացված են հարցվածների միայն դրական պատասխանները:

Գծապատկեր 41. Ու՞մ կամ որ կազմակերպությանն էր ուղղվել դիմումը (%) (N=23)



Հարկ է նշել, որ ՀՀ վարչապետին ավելի շատ դիմումներ ուղղել են Հայաստանի այլ քաղաքների բնակիչները:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ հարցերի պատասխանները.

- որքանո՞վ է իրեն պաշտպանված զգացել կոռուպցիոն երևույթի կամ դեպքի մասին հայտնողը,
- որքանո՞վ է ձեռնարկված հակակոռուպցիոն գործողությունը բավարարել հայտնողին,
- բավարարված և չբավարարված լինելու դեպքում՝ որո՞նք են դրանց պատճառները:

Կոռուպցիոն դեպքի մասին հայտնածների 62%-ը իրեն պաշտպանված է զգացել, ընդ որում՝ 45%-ը լիովին և 17%-ը՝ ավելի շուտ պաշտպանված (աղյուսակ 27):

Աղյուսակ 27. Որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգացել, երբ հայտնել եք կոռուպցիոն երևույթի կամ դեպքի մասին (%)	
Լիովին պաշտպանված	45
Ավելի շուտ պաշտպանված	17
Ավելի շուտ չպաշտպանված	9
Բոլորովին չպաշտպանված	29

Ձեռնարկված գործողություններից հարցվածներն ավելի շուտ չեն բավարարվել, քան բավարարվել են: Չբավարարվածների և բավարարվածների հարաբերությունը մոտավորապես կազմել է 60/40 (աղյուսակ 28):

Աղյուսակ 28. Որքանո՞վ եք բավարարված այն գործողություններից, որ ձեռնարկվել են կոռուպցիոն երևույթի մասին տեղեկություններ ներկայացնելու արդյունքում (%)	
Լիովին բավարարված եմ	34.8
Ավելի շուտ բավարարված եմ	7.5
Ավելի շուտ բավարարված չեմ	17.8
Բոլորովին բավարարված չեմ	39.8

Ինչ վերաբերում է չբավարարվածության պատճառներին, ապա հարցվածների 44.2%-ը նշել է, որ ցուցաբերվել է ձևական մոտեցում, 26.4%-ը՝ հարցը լուծում չի ստացել, 22.1%-ը՝ պատասխան չի ստացել, 7.3%-ը՝ ոչ մի քայլ չի ձեռնարկվել (տես Հավելվածի 1-ի Հ1.43 աղյուսակում):

ԳԼՈՒԽ 5. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պետական մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածությունը

Պետական մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իրենց իրազեկվածության մասին հայտնել են հարցվածների 39.3%-ը (տես Հավելվածի 1-ի Հ1.45 աղյուսակում): Ի դեպ՝ Երևանում Հայաստանի այլ քաղաքների ու գյուղական բնակավայրերի համեմատ իրազեկվածությունը եղել է ամենացածրը (37%): Առաջին երկուսի դեպքում այն համապատասխանաբար կազմել է 46% և 39%: Կանանց համեմատ տղամարդիկ պետական մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին ավելի իրազեկ են եղել:

Հարցվածներին առաջարկվել է նշել կոռուպցիայի դեմ պայքարի առաքելություն ունեցող պետական մարմիններ: Հարցվածների ձայնը գրեթե հավասարապես՝ 35-ական տոկոսով, բաշխվել է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության միջև: Հարկ է նշել, որ նշված կառույցներին և այլ պետական մարմիններին տրված ձայների միջև տարբերությունը զգալի է: Միաժամանակ կարելի է փաստել հակակոռուպցիոն առանցքային առաքելություն ունեցող կառույցների վերաբերյալ հանրային ցածր իրազեկվածության մասին: Այսպես, հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի[5] մասին հիշատակել է հարցվածների ընդամենը 2.2%-ը, իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի/կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի[6] մասին՝ 1.1%-ը (գծապատկեր 42):

[5] Խորհրդի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախանշվող առաջնահերթությունների և առաջարկվող լուծումների քննարկումն է, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող քաղաքականությունների, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը:

[6] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝ հայտարարագրերի ռեեստրի վարումը, հայտարարագրերի վերլուծության գործընթացի կանոնակարգումը և հայտարարագրերի հրապարակումը, հայտարարագրմանն առնչվող իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և վարչական տույժեր նշանակելը, ինչպես նաև, օրենքով սահմանված դեպքերում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և էթիկայի կանոնների խախտումների բացահայտումը և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է 2019թ. նոյեմբերի 19-ին:

Գծապատկեր 42. Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի՝ հարցվածներին հայտնի պետական մարմինները (%)



Հարցվածների ընկալմամբ իր հակակոռուպցիոն գործունեությամբ առավել արդյունավետ է Ազգային անվտանգության ծառայությունը: Այսպես, նրանց 22%-ը այդ մարմնի հակակոռուպցիոն գործունեությունը գնահատել է շատ արդյունավետ, 52%-ը՝ ավելի շուտ արդյունավետ: Իր արդյունավետությամբ երկրորդ տեղում է հատուկ քննչական ծառայությունը (61%), իսկ երրորդում միաժամանակ հայտնվել են ոստիկանությունը ու քննչական ծառայությունը (54%): Այս հարցի պատասխանից ևս կարելի է եզրակացնել հակակոռուպցիոն առաքելությամբ պետական մարմինների մասին հարցվածների ցածր իրազեկվածության մասին. հարցվածների կեսից ավելին չի լսել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի, կեսը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և 1/3-ը՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին (գծապատկեր 43):

Գծապատկեր 43. Կոռուպցիայի դեմ պայքարում որքանո՞վ են արդյունավետ գործում պետական մարմինները (%)



Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի ֆինանսավորմանը, ապա հարցվածների կեսը գտել է, որ դա կարող է իրականացնել պետությունը: Որպես ֆինանսավորման աղբյուրներ հարցվածները նշել են նաև միջազգային կազմակերպությունները, գործարարներին, քաղաքացիներին, ինչպես նաև Սփյուռքը: Հարցվածների մոտ 21%-ը նշել է, որ կարիք չկա ֆինանսավորել կոռուպցիայի դեմ պայքարը (գծապատկեր 44):

Գծապատկեր 44. Ովքե՞ր կարող են ֆինանսավորել կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում (%)



5.2. Իրազեկվածությունը հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին

Կոռուպցիայի դեմ պայքարում որոշիչ դերակատարում ունեն նաև հասարակական կազմակերպությունները, հատկապես՝ հանրային իրազեկման հարցերում:

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (94.3%) տեղյակ չէ կոռուպցիայի դեմ պայքարի առաքելություն ունեցող և Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների մասին:

Հակակոռուպցիոն առաքելություն ունեցող հասարակական կազմակերպություններից տեղեկացվածները որպես այդպիսիք նշել են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (38.2%), Իրազեկ քաղաքացիների միավորումը (14.9%), Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (11.9%) (գծապատկեր 45):

Գծապատկեր 45. Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները (%)



Հարկ է նշել, որ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հակակոռուպցիոն գործունեության վերաբերյալ ավելի իրազեկված են ոչ լրիվ և լրիվ միջնակարգ (39.9%) ու միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն (51.7%) ունեցողները: Բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները՝ այլ խմբերի համեմատ, ավելի իրազեկված են Իրազեկ քաղաքացիների միավորման (21.1%), Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (16.3%) և «Հետք»-ի (10.6%) հակակոռուպցիոն գործունեությունից: Կարելի է նկատել, որ ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների մոտ ժողովրդականություն է վայելում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (22.8%) (աղյուսակ 29):

Աղյուսակ 29. Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները՝ ըստ կրթամակարդակի (%)

	Ոչ լրիվ և լրիվ միջնակարգ (N=9)	Միջին մասն. և թերի բարձրագույն (N=13)	Բարձրագույն և հետբուհական (N=29)
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	39.9	51.7	33.5
Իրազեկ քաղաքացիների միավորում	7.2	0.0	21.1
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն	0.0	4.4	16.3
«Հետք» հետաքննող լրագրողներ	0.0	6.0	10.6
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ	22.8	6.8	2.8
Հակակոռուպցիոն ՀԿ-ների կոալիցիա	5.8	0.0	2.3
Ինֆորմացիայի ազատության կենտրոն	0.0	0.0	2.1
Իրավաբանների հայկական ասոցիացիա (AYLA)	0.0	0.0	1.1
Այլ	24.3	31.1	10.2

Հարցվածներին առաջարկվել է գնահատել նաև հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության արդյունավետությունը: Հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն դերակատարման ցածր իրազեկվածության պայմաններում հարցվածների հակադիր տեսակետները բաշխվել են գրեթե հավասարապես: Հարցվածների 29.4%-ը նշել է, որ դրանք արդյունավետ են, իսկ 30.9%-ը՝ դրանց գործունեությունը որակել է որպես ոչ արդյունավետ: Հարցվածների ցածր իրազեկվածության մասին է վկայում նաև այն, որ նրանց գրեթե 40%-ը ընտրել է պատասխանի «չգիտեմ» տարբերակը (գծապատկեր 46):

Գծապատկեր 46. Հայաստանում ՀԿ-ների արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում (%)



5.3. Հակակոռուպցիոն նախաձեռնությունների նկատմամբ վստահությունը և դրանց արդյունավետության գնահատումը

Հարցին, եթե երբևէ կոռուպցիայի զոհ դառնաք, կդիմեք արդյոք օգնության, դրական պատասխան են տվել հարցվածների 56%-ը: Ի դեպ՝ կանայք ավելի հակված են դիմելու օգնության, քան տղամարդիկ հնարավորություն (տես Հավելվածի 2-ի Հ2.47 աղյուսակում):

Օգնության դիմելու հակվածությունը բարձր է նաև գյուղական բնակավայրերում (69%), ապա՝ Երևանում (63%) և այլ քաղաքներում (56%) (տես Հավելվածի 2-ի Հ2.47 աղյուսակում):

Հարցվածների ավելի քան 3/4-ը պատասխանել է, որ առաջին հերթին կդիմի պետական մարմիններին: Հակակոռուպցիոն հասարակական կազմակերպություններին և ՋԼՄ-ներին դիմելու ցանկություն են հայտնել հարցվածների համապատասխանաբար 3 և 4%-ները, իսկ 8%-ը նշել է, որ բոլորին էլ կդիմի (գծապատկեր 47):

Գծապատկեր 47. Օգնության համար առաջին հերթին ու՞մ կդիմեք (%)



Հարցվածների 57%-ի համար դիմելու շարժառիթը իրենց իրավունքների պաշտպանությունն է, 24%-ը այդ միջոցով ակնկալում է օգնություն ստանալ, իսկ 18%-ն այդ քայլի մեջ տեսնում է կոռուպցիայի նվազեցման հնարավորություն (տես Հավելվածի 1-ի Հ1.53 աղյուսակում):

Որևիցե հաստատության չդիմելու հիմնական պատճառներից է վստահության բացակայությունը: Այսպես, հարցվածների 36%-ը դիմելն անիմաստ է համարում, քանի որ չի կարծում, որ իրեն կօգնեն: Չվստահելու մասին հստակ նշել է 15%-ը, իսկ ժամանակի բացակայությունը՝ 13%-ը: Հարցվածների 10%-ին կասեցնում է կոռուպցիոն դեպքերի դժվար ապացուցելիությունը, իսկ 7%-ին վախեցնում են հետևանքները: Հարցվածները որպես չդիմելու պատճառ նշել են նաև նման ընթացակարգերի մասին իրենց իրազեկվածության ցածր մակարդակը. հարցվածների 8%-ը ասել է՝ «չգիտեմ՝ ում և ինչպես դիմել» (տես Հավելվածի 1-ի Հ1.54 աղյուսակում):

Հարցվածների իրազեկվածության կամ տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով փորձ է արվել պարզելու հնարավոր աջակցության կարիքները: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքները և պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը (25%), կոռուպցիայի մասին բողոքը ձևակերպելու համար անվճար իրավախորհրդատվությունը (15%), այն հաստատությունների մասին տեղեկատվությունը, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դրսևորման դեպքում (14%), ինչպես նաև հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը (10%) (գծապատկեր 48):

Գծապատկեր 48. Կոռուպցիայի հարցում ինչպիսի՞ աջակցության/ տեղեկատվության կարիք ունեք (%)



Բնակավայրերի կտրվածքով կարիքների դիտարկումից հետևում է, որ հարցվածներն ամենուր հետաքրքրված են կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվությամբ (Երևան՝ 28.5%, այլ քաղաքներ՝ 28.9%, գյուղեր՝ 19.8%): Դրանից բացի, երևանցիներն ավելի հաճախ նշել են այն հաստատությունների մասին տեղեկատվությունը, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում (15.5%), անվճար իրավախորհրդատվությունը (13.8%), հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը (13.5%): Ի դեպ՝ անվճար իրավախորհրդատվությունը (22.1%) և պատկան հաստատությունների մասին տեղեկատվությունն ավելի հաճախ նշել են Հայաստանի այլ քաղաքների բնակիչները (19.2%): Ինչ վերաբերում գյուղաբնակներին, նրանք ևս հետաքրքրված են հակակոռուպցիոն աջակցության նշված եղանակներով, սակայն՝ համեմատաբար ավելի քիչ (աղյուսակ 30):

Աղյուսակ 30. Կոռուպցիայի հարցում աջակցության/տեղեկատվության կարիքները՝ ըստ բնակավայրերի

	Երևան (N=478)	Այլ քաղաք (N=460)	Գյուղ (N=563)
Տեղեկատվություն՝ կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների իրավունքների և պարտականություններ մասին	28.5	28.9	19.8
Տեղեկ. այն հաստատ. մասին, որոնց կարելի է դիմել/բողոքել պաշտոնյաների կոռուպ. վարքի դեպքում	15.5	19.2	9.3
Անվճար իրավախորհրդատվություն՝ կոռուպ. մասին բողոքը ձևակերպելու, տեղեկ. և այլն հավաքագրելու համար	13.8	22.1	10.8
Տեղեկատվություն հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին	13.5	11.7	6.4

Տեղեկատվություն կոռումպացված պաշտոնյաներին պատժելու գործընթացի և /կամ նրանց բռնագրաված գույքի վերաբերյալ	10.9	10.4	6.4
Պետական մարմինների թեժ գծերի մասին տեղեկատվություն	8.4	10.2	6.8
Անվճար ներկայացուցչություն իրավապահ մարմիններում և դատարանում / փաստաբանական ծառայություն	8.1	5.7	4.9
Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և իրազեկման գործունեություն	7.8	8.7	5.4
Կոռուպցիոն դեպքերի լուսաբանում	5.6	5.0	4.8
Այլ	0.0	0.1	0.3
Ոչ մի	42.4	35.2	51.5

ԳԼՈՒԽ 6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

6.1 Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ իրազեկվածությունը

Հարցվածների 35.8%-ը կոռուպցիայի դեմ պայքարի պատասխանատու է ճանաչել կառավարությանը/իշխող քաղաքական ուժին: Նրանց գրեթե 30%-ի կարծիքով կոռուպցիայի դեմ պայքարում պատասխանատու են բոլորը՝ նկատի ունենալով կառավարությանը/իշխող քաղաքական ուժին, քաղաքացիներին, հակակոռուպցիոն կառույցներին, հասարակական, ինչպես նաև միջազգային կառույցներին և այլն: Հարցվածների 13.8%-ը կոռուպցիայի պատասխանատու է համարել քաղաքացիներին (գծապատկեր 49):

Գծապատկեր 49. Ովքե՞ր են պատասխանատվություն կրում Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար (%)



Կարելի է փաստել, որ կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի/գործողությունների վերաբերյալ հարցվածների իրազեկվածության մակարդակը բավականաչափ ցածր է (գծապատկեր 50): Հարցվածներն իրենց պատասխաններում ավելի հաճախ նշել են տարբեր պետական մարմինների թեժ գծերի վերաբերյալ իրենց տեղեկացվածության մասին (56%):

Գծապատկեր 50. Կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի մասին տեղեկացվածությունը (%)



Ի դեպ՝ թեժ գծերի վերաբերյալ տեղեկացվածության ավելի բարձր մակարդակ է գրանցվել Հայաստանի այլ քաղաքներում (59%) (աղյուսակ 31):

Աղյուսակ 31. Կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի մասին տեղեկացվածությունը՝ ըստ բնակավայրերի (%)

	Երևան (N=478)	Այլ քաղաք (N=460)	Գյուղ (N=563)
Տարբեր պետական մարմինների թեժ գծերի մասին	55	59	54
Ազդարարման՝ կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հայտնելու, միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման մասին (www.azdararir.am)	19	12	11
ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մասին	12	20	17
2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության կատարողականի մասին	11	9	7
Ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման նախաձեռնության մասին	11	16	9
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության մասին	10	8	8
Իրավական ակտերի նախագծերի մշակմանը հասարակության մասնակցության ապահովման՝ e-draft հարթակի մասին	9	5	4
Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի մասին (www.anti-corruption.gov.am)	8	5	4
Էլեկտրոնային ժողովրդավարության այլ գործիքների մասին (e-request, e-hotline, e-petition)	7	2	4
«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության մասին	7	11	8

ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մասին[7], որը լինելու է կոռուպցիայի դեմ պայքարի ուղենիշային հիմնական փաստաթուղթն առաջիկա երեք տարիների համար, տեղեկացված է եղել հարցվածների ընդամենը 16%-ը: Ռազմավարության վերաբերյալ տեղեկացվածության համեմատաբար բարձր մակարդակ է գրանցվել այլ քաղաքներում (20%) և գյուղերում (17%): Երևանում դա եղել է ընդամենը 12% հնարավորություն (տես Հավելվածի 2-ի Հ2.56 աղյուսակում):

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ձևավորումը և ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման նախաձեռնությունն այն ծրագրերն են, որոնց վերաբերյալ հարցվածների տեղեկացվածությունը գերազանցել է 10%-ի միջակայքը (գծապատկեր 50): Եթե առաջինի վերաբերյալ հարցվածների տեղեկացվածությունը կազմել է 14%, ապա երկրորդի դեպքում՝ 12%: Առաջին միջոցառման կտրվածքով տեղեկացվածության համեմատաբար բարձր մակարդակ է գրանցվել Երևանում (19%), իսկ երկրորդի դեպքում առաջատարը Հայաստանի այլ քաղաքներն են (16%) (աղյուսակ 31):

Ինչպես հետևում է 32-րդ աղյուսակից, պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածների տեղեկացվածության մակարդակը ակնհայտորեն ցածր է, բացառությամբ տարբեր պետական մարմինների թեժ գծերի մասին տեղեկացվածության:

Աղյուսակ 32. Կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի մասին տեղեկացվածությունը՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Շատ եմ հետ. (N=273)	Որոշ չափով եմ հետ. (N=534)	Քիչ եմ հետ. (N=362)	Բոլորովին հետ. չեմ (N=331)
Տարբեր պետական մարմինների թեժ գծեր	67.7	62.2	45.3	48.6
ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ	28.5	21.3	9.1	5.7
www.azdararir.am	23.9	17.2	7.5	7
Ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման նախաձեռնություն	19.3	13.6	7.7	6.5
«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն	17.8	8.8	4.7	5
2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության կատարողական	16.2	10.6	5.5	3.3
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն	13.5	11.1	5.7	4.6
Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմ	10.1	6.2	2.4	3.7
e-draft հարթակ	10.1	8.2	2.5	2.9

[7] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2019թ.-ի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ:

Էլեկտրոնային ժողովրդավարության այլ գործիքներ	9.2	5	1.1	2

Ակներև է, որ կառավարության հակակոռուցիոն ծրագրերից ավելի իրազեկ են բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները: Նրանց իրազեկվածության մակարդակը՝ ոչ լրիվ և լրիվ միջնակարգ ու միջին մասնագիտական և թերի բարձրագույն ունեցողների համեմատ, ավելի բարձր է հատկապես անանուն ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի (23.7%), հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի (9.6%), էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների՝ e-request, e-hotline, e-petition (7.8%), իրավական ակտերի նախագծերի մշակմանը հասարակության մասնակցության ապահովման՝ e-draft հարթակի (10.1%) մասին (աղյուսակ 33):

Աղյուսակ 33. Կառավարության կողմից նախատեսված և իրականացվող ծրագրերի մասին տեղեկացվածությունն՝ ըստ կրթմակարդակի (%)

	Ոչ լրիվ և լրիվ միջնակարգ (N=≈640)	Միջին մասն. և թերի բարձրագույն (N=≈400)	Բարձրագույն և հետբուհական (N=≈410)
Տարբեր պետական մարմինների թեժ գծեր	50.2	57.4	64.5
ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ	12.6	19.9	19.2
Ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման նախաձեռնություն	9.5	11.9	15.1
«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն	8.5	7.4	9.8
Ազդարարման՝ կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հայտնելու, միասնական էլեկտրոնային հարթակ (www.azdararir.am)	8.4	12.9	23.7
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն	6.7	9.8	11.3
2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության կատարողական	5.1	10.7	13.2
Իրավական ակտերի նախագծերի մշակմանը հասարակության մասնակցության ապահովման՝ e-draft հարթակ	4	5	10.1
Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմ (www.anti-corruption.gov.am)	3.6	4	9.6
Էլեկտրոնային ժողովրդավարության այլ գործիքներ (e-request, e-hotline, e-petition)	1.8	4.6	7.8

Կարելի է նշել, որ հարցվածների կողմից հիմնականում հավանության են արժանացել կառավարության հակակոռուպցիոն այնպիսի մտադրությունները, ինչպիսիք են գույքի, եկամուտների համատարած հայտարարագրումը (64%), դատական համակարգի պաշտոնյաների բարեվարքության ստուգումը (58%), ապօրինի ձեռքբերված գույքի և ունեցվածքի վերադարձը՝ առանց քրեական հետապնդման (56%), անցումային արդարադատության միջոցառումները (55%): Հարցվածների բացասական վերաբերմունքին ավելի շատ

(հարցվածների մոտավորապես 1/3-ը) արժանացել է ապօրինի ձեռքբերված գույքի և ունեցվածքի վերադարձը՝ առանց քրեական հետապնդման (գծապատկեր 51):

Գծապատկեր 51. Հավանությունը Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների վերաբերյալ (%)



Ինչպես երևում է 34-րդ աղյուսակի տվյալներից, ակտիվ դիրքորոշում ունեցող հարցվածները դրական վերաբերմունք ունեն կառավարության հակակոռուպցիոն բոլոր նախաձեռնությունների նկատմամբ, մինչդեռ պասիվ դիրքորոշում ունեցողների մոտ դրական վերաբերմունքն ավելի տեսանելի է դատական համակարգի պաշտոնյաների բարեվարքության ստուգման և անցումային արդարադատության միջոցառումների հետ կապված:

Աղյուսակ 34. ՀՀ կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների նկատմամբ հավանությունն՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%, առանց «տեղյակ չեմ» և «դժվարանում եմ պատասխանել» տարբերակների)

	Ապօրինի ձեռք բերված գույքի և ունեցվածքի վերադարձ՝ առանց քրեական հետապնդման	Դատական համակարգի պաշտոնյաների բարեվարքության ստուգում / «վեթինգ»	Անցումային արդարադատության միջոցառումներ	Գույքի եկամուտների համատարած հայտարարագրում
Շատ եմ հետաքրքրված (N=273)	70.6	84.3	82.9	87.6
Որոշ չափով եմ հետաքրքրված (N=534)	67.6	88.0	86.9	86.1
Քիչ եմ հետաքրքրված (N=362)	64.4	85.0	81.4	82.7
Բոլորովին հետաքրքրված չեմ (N=331)	60.7	90.5	83.2	77.2

6.2 Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների արդյունավետության գնահատումն ու հնարավոր ակնկալիքները

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (81.6%) կառավարության հակակոռուպցիոն գործողությունները գնահատել է արդյունավետ, ընդ որում՝ 24.2%-ը դրանք համարել է շատ արդյունավետ, իսկ 57.4%-ը՝ որոշ չափով արդյունավետ: «Այնքան էլ արդյունավետ չէ» տարբերակը հնչել է հարցվածների 11.7%-ի պատասխաններում (աղյուսակ 35):

Աղյուսակ 35. ՀՀ ներկայիս կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գնահատումը (%)	
Շատ արդյունավետ է	24.2
Որոշ չափով արդյունավետ է	57.4
Այնքան էլ արդյունավետ չէ	11.7
Բոլորովին արդյունավետ չէ	3.2
Չգիտեմ	3.5

Կառավարության հակակոռուպցիոն պայքարը շատ արդյունավետ բնութագիրն ավելի հաճախ արձանագրվել է Հայաստանի այլ քաղաքներում (31%) և գյուղերում (26%), քան Երևանում (18%) (գծապատկեր 52):

Գծապատկեր 52. ՀՀ կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գնահատումն ըստ բնակավայրի տիպի (%)



Հարկ է նշել, որ հարցվածների կրթամակարդակի բարձրացմանը զուգընթաց կառավարության հակակոռուպցիոն գործունեության արդյունավետության գնահատականը նվազում է: Այսպես, կառավարարության հակակոռուպցիոն գործունեությունն արդյունավետ են համարել ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների 87%-ը, միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրություն ունեցողների 84.7%-ը և բարձրագույն ու հետբուհական կրթություն ունեցողների 80.3%-ը (գծապատկեր 53):

Գծապատկեր 53. ՀՀ ներկայիս կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գնահատումը՝ ըստ կրթամակարդակի (%)



Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը գրեթե նույն կերպ են գնահատել թե՛ ակտիվ դիրքորոշում, թե՛ պասիվ դիրքորոշումը ունեցողները: Ըստ հարցվածների այս երկու խմբերի՝ կառավարության հակակոռուպցիոն պայքարն արդյունավետ է՝ մեկ տարբերությամբ, որ պասիվ դիրքորոշում ունեցողների պատասխաններում «որոշ չափով արդյունավետ է» տարբերակը գրեթե երեք անգամ գերազանցել է «շատ արդյունավետ է» տարբերակին (աղյուսակ 36):

Աղյուսակ 36. ՀՀ ներկայիս կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գնահատումը՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Շատ արդյուն. է	Որոշ չափով արդյուն. է	Այնքան էլ արդյուն. չէ	Բոլորովին արդյուն. չէ
Շատ եմ հետաքրքրված (N=273)	34.4	47.5	11.9	6.2
Որոշ չափով եմ հետաքրքրված (N=534)	25.3	63.1	9.2	2.4
Քիչ եմ հետաքրքրված (N=362)	20.0	63.4	15.1	1.5
Բոլորովին հետաքրքրված չեմ (N=331)	22.2	59.4	13.7	4.6

Հարցվածների 80%-ի կարծիքով, կոռուպցիայի հաղթահարման հարցում Հայաստանի ներկայիս կառավարության քաղաքական կամքն անկեղծ է՝ լիովին անկեղծ են համարել հարցվածների 31.2%-ը, իսկ ավելի շուտ անկեղծ՝ 48.8%-ը (աղյուսակ 37):

Անկեղծության ավելի բարձր գնահատական կառավարությունը ստացել է Հայաստանի այլ քաղաքներում (85%) և գյուղերում (83%): Երևանում կոռուպցիայի դեմ պայքարում կառավարության անկեղծության ընկալումը կազմել է 71%, որից լիովին անկեղծ ընկալումը՝ 23, իսկ ավելի շուտ անկեղծը՝ 48%:

Աղյուսակ 37. Որքանո՞վ են Հայաստանի ներկայիս կառավարությունը և նրա քաղաքական կամքն անկեղծ կոռուպցիան հաղթահարելու համար (%)

Լիովին անկեղծ է	31.2
Ավելի շուտ անկեղծ է	48.8
Ավելի շուտ անկեղծ չէ	8.9
Բոլորովին անկեղծ չէ	2.1

Աղյուսակ 38. Որքանո՞վ է ներկայիս կառավարությունն արդարացնում կոռուպցիայի դեմ պայքարի ակնկալիքները (%)

Լիովին արդարացնում է	20.8
Մասամբ է արդարացնում	53.9
Քիչ է արդարացնում	15.2
Բնավ չի արդարացնում	6.5

Չգիտեմ	8.9	**Չգիտեմ**	3.6

Հարցվածների գրեթե 3/4-ն այն կարծիքին է, որ կառավարությանն հաջողվել է արդարացնել կոռուպցիայի դեմ պայքարի ակնկալիքները. 20.8%-ը հայտնել է, որ ակնկալիքներն արդարացված են լիովին, իսկ 53.9%-ը՝ մասամբ (աղյուսակ 38): Կառավարության հակակոռուպցիոն ջանքերի նկատմամբ ավելի դրական վերաբերմունք գրանցվել է Հայաստանի այլ քաղաքներում և գյուղերում: Դրանցում «լիովին արդարացնում է» պատասխանն ավելի հաճախ է նշվել (այլ քաղաքներում՝ 27%, գյուղերում՝ 23%), քան Երևանում (15%):

Ինչ վերաբերում է ակտիվ և պասիվ դիրքորոշում ունեցող հարցվածներին, ապա կարելի է նշել, որ ըստ պասիվ դիրքորոշում ունեցողների՝ կոռուպցիան հաղթահարելու հարցում կառավարության քաղաքական կամքն ավելի շուտ անկեղծ է: Ի տարբերություն սրանց՝ քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով շատ հետաքրքրվածների գրեթե 43%-ը կառավարության քաղաքական կամքը համարել է լիովին անկեղծ (աղյուսակ 39):

Աղյուսակ 39. Որքանո՞վ են Հայաստանի ներկայիս կառավարությունը և նրա քաղաքական կամքն անկեղծ կոռուպցիան հաղթահարելու համար՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Լիովին անկեղծ է	Ավելի շուտ անկեղծ է	Ավելի շուտ անկեղծ չէ	Բոլորովին անկեղծ չէ
Շատ եմ հետաքրքրված (N=273)	42.9	41.6	11.2	4.4
Որոշ չափով եմ հետաքրքրված (N=534)	32.9	57.8	7.6	1.6
Քիչ եմ հետաքրքրված (N=362)	29.2	59.8	10.3	0.6
Բոլորովին հետաքրքրված չեմ (N=331)	34.3	50.2	11.9	3.7

Սպասումների արդարացված լինելու տեսանկյունից կառավարության հակակոռուպցիոն գործողությունները դրական են գնահատել ակտիվ դիրքորոշում ունեցողները. «լիովին արդարացնում է» տարբերակը նշել են շատ հետաքրքրվածների 33%-ը: Պասիվ դիրքորոշում ունեցողների մոտ հարաբերականորեն բարձր է «քիչ է արդարացնում» տարբերակի բաժինը (21%, աղյուսակ 40):

Աղյուսակ 40. Որքանո՞վ է ներկայիս կառավարությունն արդարացնում կոռուպցիայի դեմ պայքարի ակնկալիքները՝ ըստ հարցվածների քաղաքականությամբ և պետական կառավարման հարցերով հետաքրքրվածության մակարդակի (%)

	Լիովին արդար. է	Մասամբ է արդարացնում	Քիչ է արդարացնում	Բնավ չի արդարացնում
Շատ եմ հետաքրքրված (N=273)	33.1	46.9	12.3	7.6
Որոշ չափով եմ հետաքրքրված (N=534)	21.4	62.5	11.6	4.5
Քիչ եմ հետաքրքրված (N=362)	14.9	58.0	20.2	6.9
Բոլորովին հետաքրքրված չեմ (N=331)	19.5	50.1	20.9	9.5

Բացի կառավարության հակակոռուպցիոն ջանքերը որոշակի հայտանիշներով գնահատելը, հարցվածներին առաջարկվել է նշել այն հիմնական առաջնահերթ ուղղությունները, որոնք հնարավորություն կտան կառավարությանը կոռուպցիայի դեմ պայքարը դարձնել ավելի արդյունավետ:

Առաջարկված առաջնահերթ ուղղություններն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Հարցվածների կողմից առավել հաճախ նշվել է պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումը և ստուգումը (15%): Հարցվածների 13.7%-ը կոռուպցիայի դեմ պայքարում կարևորել է քաղաքացիների ներգրավվածությունը, իսկ 11.4%-ը հակակոռուպցիոն ուղղություն է համարվել կառավարման որակի բարձրացումը, դրա թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը: Հարցվածների 10.7%-ի համար էական է և' կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը, և' պատժի անխուսափելիության ապահովումը: Պատասխանների 10% սահմանագիծը չհատած, սակայն առավել հաճախ նշված առաջնահերթ ուղղություններն են՝ վարչական կոռուպցիայի հաղթահարումը (9.3%), օրենքներում և կառավարության որոշումներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը (8.8%), դատական համակարգում բարեփոխումները (7.4%), հանրային ծառայողների բարեվարքության ամրապնդումը (7%), ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը (6.1%) (գծապատկեր 54):

Գծապատկեր 54. Կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ դարձնող առաջնահերթ ուղղությունները (%)



Հարցին, թե ինչպիսի պատասխանատվություն պետք է նախատեսվի կոռումպացված նախկին պաշտոնյաների համար, հարցվածների 81.2%-ը մատնանշել է ապօրինի ճանապարհով ձեռքբերված գույքի բռնագրավումը: Միաժամանակ հարցվածների 53.3%-ը գտել է, որ պատժի այդ միջոցը պետք է զուգակցվի քրեական հետապնդմամբ, իսկ 27.9%-ի կարծիքով դա պետք է արվի առանց քրեական հետապնդման: Ըստ 12.4% կազմող պատասխանների՝ ցածր օղակի

պաշտոնյաները պետք է ազատվեն, իսկ պատասխանատվության ենթարկվեն միայն ղեկավար օղակի կոռումպացված պաշտոնյաները (գծապատկեր 55):

Գծապատկեր 55. Ինչպիսի՞ պատասխանատվություն պետք է նախատեսվի կոռումպացված նախկին պաշտոնյաների համար (%)



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված են հետազոտության հիմնական եզրակացությունները, ինչպես նաև առաջարկություններ, որոնց հիմքում ընկած են ԹԻՀԿ և ՀՌԿԿ-Հայաստանի դիտարկումներն ու փորձը:

Հայաստանի հիմնախնդիրների շարքում կոռուպցիայի, դրա տարածվածության և միտումների ընկալումը

1. Հանրության կողմից կոռուպցիան ընկալվում է որպես հանրային ոլորտի լրջագույն հիմնախնդիր:
2. Հարցվածներին հանրային կառավարման համակարգում ամենաշատը հուզել են կադրային հիմնախնդիրները, այդ թվում՝ անհաջող նշանակումները, հին կադրերի սաբոտաժը, հանրային կառավարման փորձի բացակայությունը:
3. Ընդհանուր առմամբ հարցվածների մոտ արձանագրվել է կոռուպցիայի առավել հայտնի դրսևորումների մասին իրազեկվածության բավարար մակարդակ, սակայն դրսևորվել է նաև հանդուրժողականություն որոշ կոռուպցիոն երևույթների նկատմամբ, ինչը կարող է պայմանավորված լինել մշակութային գործոններով կամ գիտելիքի բացով:
4. Հանրային ընկալումներում կոռուպցիայի հիմնական դրդապատճառներն են բյուրոկրատական քաշքշուքներից խուսափելը, խնդրի լուծման օրինական տարբերակի բացակայությունը, իրավական կարգավորումների անկատարությունը:
5. 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո պետական պաշտոնյաների հետ հարաբերվելիս հարցվածների կողմից առավել հաճախ մատնանշված կոռուպցիոն երևույթը խնամի-ծանոթ-բարեկամի միջոցով կամ գումարի դիմաց պաշտոնյայի կողմից նշանակումների իրականացումն է:
6. Հանրային ընկալումներում առավել կոռումպացված կառույցներ են դատարանները, ՋԼՄ-ները և դատախազությունը, իսկ ոլորտները՝ առողջապահությունը, ճանապարհային ոստիկանությունը:
7. Տեղեկատվության հավաստիության առումով Հ1 Հանրային հեռուստաընկերությունը զիջել է «Շանթ» և «Արմենիա» հեռուստաընկերություններին:

Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը

- *Բարեփոխել հանրային կառավարման համակարգը՝ դրանում հետևողաբար ներդնել լավ կառավարմանը բնորոշ այնպիսի սկզբունքներ և մեխանիզմներ, ինչպիսիք են՝ հանրային ծառայողների արհեստավարժությունը և բարեվարքությունը, մրցույթների, նշանակումների և առաջխաղացումների թափանցիկությունը, հանրային ծառայողների հաշվետվողականությունը և պատասխանատվությունը:*
- *Հանրային ծառայողների գործունեությունը գնահատելու և դրանց մոտիվացիան բարձրացնելու համար հանրային հատվածում ընդունել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն, որը կհիմնվի կատարողականի թիրախային*

ցուցանիշների, սերնդափոխության պլանավորման ու մասնագիտական շարունակական զարգացման վրա:

- *Հանրային կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության շրջանակներում ձեռնամուխ լինել արհեստավարժ ու օրինավոր/բարեվարք հանրային ծառայողի կերպարի ձևավորմանը: Այդ նպատակով ապահովել յուրաքանչյուր պետական պաշտոնի անձնագրի առկայությունը՝ սահմանելով դրա համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների շրջանակն ու փորձառությունը, ինչպես նաև վարքագծի կանոնները, ներառյալ՝ շահերի բախման իրավիճակների կառավարումը:*
- *Հանրային ծառայողների ընտրությունը կատարել ըստ պաշտոնի նկարագրի, իսկ նրանց գործունեությունը գնահատելու համար ներդնել կատարողականի թիրախային ցուցանիշների և գիտելիքների ու հմտությունների շարունակական զարգացման համակարգերը:*
- *Բարձրացնել հանրային ծառայողների աշխատավարձը՝ ներգրավելու առավել բարձրակարգ մասնագետների: Հանրային ծառայողների պարգևավճարների հատկացումն ու առաջխաղացումն իրականացնել՝ բացառապես հիմք ընդունելով կատարողականի թիրախային ցուցանիշների գնահատման արդյունքները, ընդ որում տվյալ մոտեցումը կիրառելով բոլոր հանրային ծառայողների նկատմամբ՝ անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից:*
- *Ակտիվացնել հանրային կրթությանը միտված գործողությունները, այդ թվում՝ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ:*
- *Հանրային կառավարման համակարգը, այդ թվում՝ դրա «խաղի կանոնները», վարչարարության ու իրավակիրարկման պրակտիկան բարելավելու նպատակով ձեռնամուխ լինել հանրային կառավարման համակարգի գնահատման «սպառողական» մոտեցման ներդրմանը, համաձայն որի՝ հանրային կառավարման մարմինները դիտարկվում են որպես ծառայություններ մատուցող, իսկ հասարակությունը՝ որպես սպառող:*
- *Գնահատման սպառողական մոտեցումը ինտեգրել հանրային ծառայողների կատարողականի գնահատման համակարգին:*
- *Որակյալ ծառայություններ մատուցելու և սպառողների հավատարմությունը շահելու նպատակով ապահովել հանրային կառավարման մարմինների կողմից առնչվող նորմատիվ իրավական ակտերի որակի և իրենց գործունեության պարբերական գնահատումները՝ այդ թվում՝ գնահատելով կոռուպցիոն ռիսկերը և մշակելով հակակոռուպցիոն քաղաքականության առաջարկություններ, վերացնելով երկակի մոտեցումներ կիրառելու հնարավորությունները և նվազեցնելով ավելորդ վարչարարությունը:*
- *Հանրային ծառայողների պատասխանատվությունն ուժեղացնելու, հանրային վերահսկողությունը խթանելու և հայեցողական լիազորությունները սահմանափակելու*

համար որդեգրել գործունեության թափանցիկությունը և մասնակցայնությունը խրախուսող կառուցակարգեր:

- *Շարունակել էլեկտրոնային կառավարման նորարարական եղանակների կիրառումը՝ պետական պաշտոնյա և քաղաքացի անմիջական շփումները հնարավորինս նվազեցնելու համար:*
- *Առավել կոռումպացված որակված կառույցներում և ոլորտներում նախաձեռնել լրացուցիչ, առավել մանրամասն ուսումնասիրություններ և սպուգումներ՝ դրանց համար բնութագրական կոռուպցիոն ռիսկերը և դրանց ծագման աղբյուրները վերհանելու նպատակով:*

Առաջարկություններ հասարակական կազմակերպություններին

- *Հակակոռուպցիոն կրթական և իրազեկման ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ թիրախավորել դրանք ըստ շահակիցների տարբեր խմբերի:*
- *Հակակոռուպցիոն կրթական և իրազեկման ծրագրերի ու արշավների միջոցով նպաստել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ամրապնդմանը, աջակցել հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու պահանջատիրական վարքագծի ձևավորմանն ու արմատավորմանը:*
- *Իրականացնել թիրախային հակակոռուպցիոն կրթական և իրազեկման ծրագրեր ըստ շահակիցների տարբեր խմբերի՝ հաշվի առնելով ժողովրդագրական գործոնները:*
- *Աջակցել հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու պահանջատիրական վարքագծի ձևավորմանն ու արմատավորմանը, ինչպես նաև ակտիվացնել գործունեությունը հանրային վերահսկողության գործընթացներում:*

Առաջարկություններ Հանրային հեռուստաընկերությանը և ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին

- *Հանրային ռեսուրսի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերլուծել հանրության վստահության պակասի պատճառները, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ հասարակական կյանքում Հանրային հեռուստաընկերության դերը բարձրացնելու և հանրության վստահությունը վերականգնելու ուղղությամբ:*

Կոռուպցիոն երևույթներին առնչվելու անձնական փորձը և վարքագիծը

8. Հայաստանում առկա է կոռուպցիայի հանրային մերժման զգալի ներուժ, և ձևավորվում է կոռուպցիայի անընդունելիությունը գիտակցող քաղաքացիական կամք:

Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը

- *Հասարակության մեջ առկա հակակոռուպցիոն ներուժը և հանրային վստահությունն ամրապնդելու համար՝ խթանել կոռուպցիոն հիմնախնդիրների լուծումը «խնդրի բացահայտում – լուծում – ակնկալվող արդյունք» եռամիասնական շղթայի անխափան ու հետևողական գործունեության ու դրա թափանցիկության ապահովման միջոցով:*

Առաջարկություններ հասարակական կազմակերպություններին

- *Աջակցել հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու պահանջատիրական վարքագծի ձևավորմանն ու արմատավորմանը, ինչպես նաև ակտիվացնել գործունեությունը հանրային վերահսկողության գործընթացներում:*

Հակակոռուպցիոն անհատական վարքագիծն ու գործողությունները

9. Կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելը կամ ազդարարելը հայ հասարակության կողմից դիտարկվում է որպես պախարակելի երևույթ: Հարցվածներն ավելի հակված են դիմելու ոստիկանությանը և ՀՀ վարչապետին, քան անանուն ազդարարման www.azdararir.am հարթակին: Ձեռնարկված գործողություններից հարցվածներն ավելի շուտ եղել են չբավարարված, ընդ որում՝ մեծ մասը համարել են, որ իրավասու մարմինների կողմից խնդրի նկատմամբ ձևական մոտեցում է դրսևորվում:

Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը

- *Հանրային իրազեկման միջոցառումների միջոցով «կոտրել» ազդարարման՝ որպես պախարակելի երևույթի, վերաբերյալ հասարակության մեջ առկա կարծրատիպերը և խրախուսել հաջողության պատմությունների տարածումը:*
- *Բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը ազդարարման համակարգի վերաբերյալ և ներկայացնել դրա արդյունավետ գործունեության անհրաժեշտությունը կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև պարզաբանել դրա հնարավոր ընթացակարգերն ու հետևանքները:*
- *Նախատեսել անվճար իրավաբանական օգնության խրախուսման համակարգեր քաղաքացիների համար:*

Առաջարկություններ հասարակական կազմակերպություններին

- *Տարածել ազդարարման վերաբերյալ գիտելիքը հանրության լայն շրջաններում:*
- *Տրամադրել իրավաբանական աջակցություն քաղաքացիներին՝ խթանելու ազդարարման համակարգի կիրարկումը:*

Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործողությունների ընկալումը

10. Ցածր է կոռուպցիայի դեմ պայքարի առաքելություն ունեցող հասարակական կազմակերպությունների և դրանց գործունեության մասին հանրային տեղեկացվածությունը:

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը

- *Աջակցել քաղաքացիական հասարակության կառույցների համար նպաստավոր իրավական միջավայրի ստեղծմանը, այդ թվում՝ ամրապնդելով համագործակցությունը համատեղ գործող հարթակների միջոցով:*

- *Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը դիտարկել և՝ որպես դրանց կարողությունների զարգացմանն ու ճանաչելիությանը նպաստող եղանակ, և՝ որպես հանրային սպասումների բացահայտմանն ու հանրային ընկալումների գնահատմանը, հանրային իրազեկմանն ու գիտելիքի տարածմանը, հանրային վերահսկողությանը ու վարքագծի փոփոխմանն ուղղված միջոց:*

Առաջարկություններ հասարակական կազմակերպություններին

- *Հանրային կյանքում բարձրացնել սեփական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, դրսևորել ավելի բարձր ակտիվություն, վեր հանել շահառուների կարիքները և ռեսուրսներն ուղղել դրանց բավարարման ուղղությամբ:*
- *Շարունակաբար զարգացնել սեփական կարողությունները և ամրապնդել կապերը շահառու համայնքների հետ:*

Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների ընկալումը

11. Կառավարության հակակոռուպցիոն գործողությունների հանրային իրազեկության մակարդակը ցածր է: Հանրության աննշան հատվածն է տեղյակ հակակոռուպցիոն առաքելություն ունեցող առանցքային կառույցների (հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի/կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) մասին:

Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը

- *Խթանել հակակոռուպցիոն կառույցների վերաբերյալ տեղեկատվության տարածումը և դրանց գործունության թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը:*
- *Ստեղծել կառուցակարգեր ապահովելու քաղաքացիների կապը հակակոռուպցիոն մարմինների հետ:*

Առաջարկություններ հասարակական կազմակերպություններին

- *Ակտիվացնել հակակոռուպցիոն մարմինների մասին հանրային իրազեկմանը միտված միջոցառումները, ընդլայնել հանրային մասնակցության հնարավորությունները հակակոռուպցիոն մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործում:*

Հավելված 1.
Պարզ հաճախությունների աղյուսակներ

Հավելված 2.
Խաչաձև աղյուսակներ